Ազգ
Azg
armenian daily

Ապրիլ
14
Չորեքշաբթի
1993

ՌԱՄԿԱՎԱՐ
ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիւ 68 (319)
գինը՝ 5ռ.
դասիչ 69149
Երեւան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Ղարաբաղի Հարց

Թ. Օզալ. «Անդրկովկասի խնդիրները պետք է լուծել ԵԱՀԽ շրջանակներում»

«Անդրկովկասի պատերազմը դադարել է լինել Ղարաբաղի հարցը, քանի որ ռազմական գործողություններ են մղվում արդեն Ադրբեջանի տարածքում», հայտարարեց Թուրքիայի նախագահ Թ. Օզալը ապրիլի 13-ին Թուրքմենստանի մայրաքաղաք Աշխաբադում կայացած մամուլի ասուլիսում: Նրա խոսքերով, հակամարտությունը հարկավոր է լուծել «ԵԱՀԽ շրջանակներում»: Թուրքիան արդեն նախազգուշացրել է իր դիրքորոշման մասին եւ մտադիր է կրկին հայտարարել դրա մասին, ընդգծեց Թ. Օզալը:

Երեկ ժամանելով Բաքու, Թուրքիայի նախագահը հայտարարեց, թե Թուրքիան պնդելու է Ադրբեջանի տարածքից հայկական զորքերի դուրսբերման իր պահանջը: «Ազգ»

ԳԽ

Բարեփոխումները կրկին տորպեդահարվեցին

ՀՀ Գերագույն խորհրդի երեկվա նիստում նորից քննարկվեց եւ քվեարկվեց հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմնի բարեփոխումների հարցը: Ինչպես հայտնի է, այն մոտ մեկ ամիս առաջ ընդամենը երկու կողմ ձայն չբավարարելու պատճառով մերժվել էր խորհրդարանի կողմից: Եւ միայն ՀՀ ԳԽ ՀՌԱԿ խմբակցության համառ պայքարի շնորհիվ էր, որ ՀՀ ԳԽ նախագահության կողմից նորից օրակարգ էր մտցվել: Սակայն այս անգամ եւս անհրաժեշտ «քվե»ներ չհավաքեց: Ինչո՞ւ: Պատճառները մեկնաբանում է ՀՀ ԳԽ քարտուղար, ՀՌԱԿ խմբակցության անդամ Վարազդատ Ավոյանը. «Գերագույն խորհրդի բարեփոխումները, որոնց անհրաժեշտությունը սուր կերպով զգացվում է դեռեւս 4-րդ նստաշրջանից սկսած, կրկին փակուղի մտան: Եւ սա այն դեպքում, երբ խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցություններն իրենց այդ գաղափարի ջատագովն էին համարում: Մինչ այդ ՀՀ ԳԽ նախագահությունը, հարցը արտահերթ քննարկման մտցնելու որոշում կայացնելով, բարեփոխումների վերաբերյալ նախագծեր ներկայացրած բոլոր ուժերին իրենց մոտեցումները կրկին մատուցելու հնարավորություն էր ընձեռել: Նրանցից հինգը՝ Ռուբեն Թորոսյանը, Համլետ Հովսեփյանը, Շավարշ Քոչարյանը, Բաբկեն Արարքցյանը եւ ես, օգտվեցինք այդ իրավունքից:

Կրկին առավել ձայն հավաքեց նախորդ անգամ մերժված տարբերակը, սակայն արդյունքն այս անգամ եւս նույնն էր. խափանման իրենց դերում էին կոմունիստական կուսակցությունը, ՀՅԴ-ն եւ ԱԺՄ-ն: Նրանք կամ դեմ քվեարկեցին, կամ ձեռնպահ, կամ ընդհանրապես կոճակները չսեղմեցին:

Ինձ համար, մեղմ ասած, պարզապես անհասկանալի էր այդպիսի վերաբերմունքը: Եթե այդ ուժերն իրոք շահագրգռված էին օրենսդիր բարձրագույն մարմնի աշխատանքների արդյունավետության բարձրացումով, ապա նման առիթը բաց չէին թողնի:

Անընդհատ պնդելով, որ հանրապետության նախագահին իրավասությունների առումով հսկայական առավելություններ ունի խորհրդարանի նկատմամբ, իրենց ավելի արմատական փուլի փոփոխությունների կողմնակիցներ հայտարարելով, փաստական այդ ուժերը իրականում տորպեդահարեցին Գերագույն խորհրդի աշխատանքները բարելավելու հույսերը:

Չեմ կարծում, որ այսուհետ բարեփոխումների մասին խոսք կլինի: Իսկ թե ինչ կլինի առաջիկայում, դժվար չէ կանխագուշակել, թեեւ կյանքը միշտ իր շտկումներն է մտցնում»: Հ. Պ.

Մոսկվայում դոլարի փոխարժեքն աճում է: Մոսկվայի միջբանկային վալյուտային բորսայի հերթական աճուրդում ապրիլի 13-ին արձանագրվեց ԱՄՆ-ի 1 դոլլարի դիմաց 766 ռուբլի, որը 26 ռուբլով բարձր է ապրիլի 8-ին կայացած նախորդ աճուրդի ցուցանիշից: Այդ օրը վաճառքի ծավալը կազմեց 82 միլիոն 260 հազար դոլլար (նախորդ աճուրդում եղել էր 80 միլիոն 250 հազար): Նախնական պահանջարկը կազմել էր 85 միլիոն 950 հազար, առաջարկը՝ 66 միլիոն 890 հազար դոլլար: Աճուրդին մասնակցում էր 64 բանկ: Սնարֆ

Հայաստան

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆՈՒՄ ԶՈՀՎԵԼ Է ՄԵԿ ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉ

Կապանի սահմանագծում մարտերը շարունակվում են

Ապրիլի լույս 13-ի գիշերը Ադրբեջանի տարածքից հրետակոծվել են Հայաստանի սահմանամերձ Նոյեմբերյանի, Իջեւանի եւ Գորիսի շրջանները: Հրետակոծությունների հետեւանքով Նոյեմբերյանի շրջանում զոհվել է մեկ խաղաղ բնակիչ: Այս մասին երեկ հայտնեցին Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից: Հայկական ուժերը ստիպված են եղել թշնամու կրակակետերը լռեցնելու նպատակով դիմել պատասխան համարժեք գործողությունների:

Մինչդեռ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից հայտնում են, թե իբր երեկ հայկական կազմավորումները կրկին խախտել են Ադրբեջանի պետական սահմանը եւ հրետանային ուժգին կրակից հետո ներխուժել Զանգելանի շրջանի տարածք եւ գրավել Քոլլու-Ղշլաղ եւ Ռազդերե գյուղերը: Ըստ նույն աղբյուրների, ադրբեջանական ուժերը կասեցրել են հայկական բանակի գրոհը՝ պատճառելով զգալի կորուստներ: Ավելի վաղ Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայությունը հայտարարել էր, թե իբր հայկական կազմավորումները խախտել են Ադրբեջանի պետական սահմանը նույն ուղղությամբ եւ 15 կմ խորացել Զանգելանի շրջանի տարածքում, սակայն անցնելով հակահարձակման, ադրբեջանական բանակը «լռեցրել է թշնամու կրակակետերը» Կապանի շրջանի Ծավ, Սրաշեն եւ Ներքին Հանդ գյուղերում: Հիշեցնենք, որ իրականում տեղի էր ունեցել հակառակը. սակայն հայկական կազմավորումները շրջապատելով եւ գլխովին ոչնչացնելով Հայաստանի տարածք ներխուժած ադրբեջանական ստորաբաժանումները, գերադասել էին չներխուժել Զանգելանի շրջան եւ բավարարվել միայն Հայաստանի պետական սահմանի վերականգնումով: «Ազգ»

Ճակատ

Ղարաբաղի ուժերը չեն մտել Զանգելանի շրջան

Երեկ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբում հերքել են ադրբեջանական կողմի տարածած այն հայտարարությունը, թե իբր հայկական ուժերը ներխուժել են Ադրբեջանի Զանգելանի շրջանի տարածք եւ գրավել 14 գյուղ: Ներկայումս ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը տեղաբաշխված են Հադրութի եւ Ֆիզուլու շրջանների սահմանագծում եւ պատրաստ են կասեցնել այդ ուղղությամբ ադրբեջանական բանակի հնարավոր լայնածավալ հարձակումը: Ինչ վերաբերում է օպերատիվ իրադրությանը, ապա երեկ եւ նախորդ գիշեր այն էական փոփոխություններ չի կրել: Առանձին դիրքային մարտեր են ընթացել միայն Մարտակերտի շրջանի ռազմաճակատներում եւ Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մատույցներում: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան:

Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից հայտնում են, թե իրադրությունը շարունակում է խիստ լարված մնալ Ֆիզուլի շրջկենտրոնի մատույցներում, որտեղ պահպանվում է հայկական ուժերի լայնածավալ հարձակման վտանգը: Քաղաքը շարունակվում է ուժգին հրետակոծության ենթարկվել, որի հետեւանքով կան զգալի ավերածություններ:

Ըստ նույն աղբյուրների, Հայաստանից ԼՂՀ Մարտակերտի շրջանի Սարսանգի ջրամբարի գոտի են գործուղվել մի շարք բարձրաստիճան սպաներ: Ադրբեջանական ռազմական մասնագետներն այն կարծիքին են, թե առաջիկայում հնարավոր է հայկական բանակի լայնածավալ գրոհ այս ուղղությամբ: Ադրբեջանի ռազմական գերատեսչությունը տեղեկացնում է նաեւ, թե իբր Հայաստանի զինված ուժերը հրաման են ստացել Քելբաջարի շրջանի տարածքում հավաքել հայկական ուժերի խփված զրահատեխնիկան եւ դիակները՝ նպատակ ունենալով թաքցնել ագրեսիայի հետքերը նախքան ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ հանձնաժողովների այցելությունը Քելբաջարի շրջան: «Ազգ»

Բաքում

Առաջին անգամ վառելիք ծովով

Երեկ առաջին անգամ ծովային ճանապարհով, բեռնատար նավով Ռուսաստանի Նովոռոսիյսկ նավահանգստից Բաթում հասցվեց Հայաստանի համար նախատեսված 17 հազար տոննա մազութ: Այս մասին երեկ տեղեկացանք Հայաստանի պետնախարար Սեդրակ Թաշճյանից: Նա տեղեկացրեց նաեւ, թե ներկայումս մազութը բեռնաթափվում է Բաթումում գնացքային ճանապարհով Հայաստան հասցվելու համար:

Այս գործողության իրականացումը հնարավոր է դարձել միայն ամերիկյան կառավարության աջակցության շնորհիվ, որը ոչ միայն իր վրա է վերցրել մազութի տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը, այլեւ պարտավորվել է մազութը հասցնել մինչեւ Հայաստանի սահմանը: Պրն. Թաշճյանը տեղեկացրեց նաեւ, թե ընդհանրապես ամերիկյան կառավարությունը վճռել է 5 միլիոն դոլլար հատկացնել Հայաստանի համար վառելիք տեղափոխելու նպատակով, որի շնորհիվ հնարավոր կլինի ծովային ճանապարհով հանրապետություն բերել 65-70 հազար տոննա մազութ: Եւս մեկ միլիոն դոլլար տրամադրել է Ճապոնիայի կառավարությունը՝ կերոսինի տեղափոխման ծախսերը հոգալու համար:

Պետնախարարը տեղեկացրեց, թե առաջիկա մի քանի օրերի ընթացքում Իրանի Հենգելի նավահանգստից Կասպից ծովով Մախաչկալա կհասցվի 2600 տոննա դիզվառելիք, այնուհետեւ Հայաստան տեղափոխելու նպատակով: Ըստ նրա, առաջիկայում հնարավոր է, որ Հայաստանի մի քանի բենզակայաններ աշխատեն իրանական ձեռնարկությունների հետ համատեղ կամ վարձակալության տրվեն նրանց, ինչը հնարավորություն կտա փոքր-ինչ ավելացնել բենզինի մուտքը հանրապետություն: «Ազգ»

Բալկաններ

ՄԱԿ-ում հասկանում են ռուսներին

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հետաձգեց Սերբիայի դեմ խստացված միջոցառումներ կիրառելու հարցի քննարկումը, հաշվի առնելով Ռուսաստանի պահանջը: Մ. Նահանգները, որ բոլորից ավելի շահագրգռվածություն է հանդես բերում Բոսնիայում սերբերի դեմ սեղմումներ մտցնելու հարցում, բայց միաժամանակ շահագրգռված լինելով նախագահ Ելցինին օգնելու գործում, Անվտանգության խորհրդի երեկվա նիստում աշխատեց հարցի քննարկումը տեղափոխել ապրիլի 25-ի հանրաքվեին հետեւող ավելի ուշ թվականի, ելնելով այն մտահոգությունից, որ Ելցինի հակառակորդ ազգայնականները կարող են հարցը շահարկել ընդհանրապես սերբամետ ռուսների շրջանակներում:

Մինչ այդ, ՆԱՏՕ-ի ռազմօդանավերը երեկ սկսեցին պարեկել Բոսնիայի երկնքում, որ հայտարարված է «թռիչքազերծ գոտի»: Հսկողական պարտականության մեջ գտնվող ֆրանսիական «Միրաժ 2000» օդանավերից մեկը երեկ առավոտյան տեխնիկական խափանման հետեւանքով ընկավ Ադրիական ծով:

Մյուս կողմից, Բոսնիայի մայրաքաղաք Սարաեւոյում, Սրեբրենիցա քաղաքում եւ այլ վայրերում անցնող 2 օրերին վերսկսվեցին ծանր ռմբակոծությունները: Կան բազմաթիվ զոհեր: ■

Իսկ մեզ մնում է հուսալ... 1993 թ. փետրվարի 26-ին Վրաստանի Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց, որտեղ ասվում է, որ ռուսաստանցի զինվորականներից առգրավված կայքը, փոխադրամիջոցները, զենքը պատկանում են Վրաստանի պետությանը եւ ոչ թե մասնավոր անձանց: Այդ փաստաթղթի համաձայն, Արեւմտյան Վրաստանի շրջանային ոստիկանությունը իրականացնում է մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է մասնավոր անձանցից առգրավել ապօրինաբար ձեռք բերված կամ գողացված զենքը եւ տեխնիկան: Սնարֆ

Աշխարհ

Իսրայելի ու Եգիպտոսի «բերանից կտրելով» Ռուսաստանին

Մ. Նահանգների Ներկայացուցիչների պալատի մեծամասնության ղեկավար Գեպհարդի կարծիքով, այս եւ առաջիկա տարիներին Վաշինգտոնը տարեկան 1-2 միլիարդ դոլլարի օգնություն ցույց կտա Ռուսաստանին: Այդ գումարի մեծ մասը կհայթայթվի Իսրայելին ու Եգիպտոսին տրվող օգնության կրճատումներից: Ներկայացուցիչների պալատի խոսնակը նոր էր վերադարձել Ռուսաստան եւ Ուկրաինա կատարած այցելությունից:

Բուտրոս Ղալին զգուշացնում է Անգոլայի ապստամբներին

Փղոսկրե Ափի մայրաքաղաք Աբիջանում Անգոլայի խաղաղության բանակցությունները սկսվեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի նախազգուշացումով: Վերջինիս հայտարարությունը շեշտում է, որ իր համբերությունն անսպառ չէ, եւ թե հակամարտ կողմերը պետք է իրական հանձնառություն հանդես բերեն խաղաղության հասնելու գործում: Այսուհանդերձ, Ունիտա ապստամբ խմբավորումը երեկ հայտարարեց, թե նոր բնակավայրեր է գրավել երկրի հյուսիսային շրջաններում:

ԱՄՆ-ը Վիետնամից պահանջում է գերիներին

Քլինթոնի վարչությունը Հանոյից բացատրություն պահանջեց այն 1205 ամերիկացի գերիների առկայության մասին, որոնք ըստ պաշտոնական մի փաստաթղթի գտնվում են Վիետնամում 1972 թ. պատերազմից ի վեր: Հիշյալ փաստաթուղթն անցյալ շաբաթ Վաշինգտոնին էր հանձնվել Ռուսաստանի ներկայացուցչի կողմից: Ամերիկացի գերիների թիվն այնտեղ կրկնապատիկ ավել է 1973-ին վերադարձված գերիների թվից:

600 հավելյալ ոստիկան Կալիֆոռնիայում հանուն կարգուկանոնի

Երրորդ օրն է արդեն, որ Լոս Անջելեսում տեղի է ունենում սեւամորթ վարորդ Ռոդնի Քինգին ծեծի ենթարկած 4 ոստիկանների 2-րդ դատավարությունը: Այդ առթիվ նահանգի կառավարիչ Ուիլսոնը հավելյալ 600 ոստիկան է հրավիրել, իսկ Լոս Անջելեսում գտնվող ծովայինների բազայում սկսվել են «քաղաքային պատերազմական մարտավարժանքներ» կարգուկանոնի պահպանման նպատակով: Անցյալ տարի դատավարությանը հետեւել էին եռօրյա զանգվածային անկարգություններ նահանգի բազմաթիվ քաղաքներում:

Ղրղզստանում հողը պետական

Ղրղզստանի սահմանադրությունը հանրապետության հողը, ընդերքը, ջրերը եւ բոլոր բնական հարստությունները հայտարարել է պետության սեփականություն: Հիմնական բանավեճերը ծավալվեցին հողի սեփականության խնդրի շուրջը: Ժողովրդի ընտրյալները մերժեցին օրենքի այն կետը, ըստ որի «Ղրղզական Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում եւ չափերով հողամասերը կարող են լինել քաղաքացիների եւ նրանց միավորումների սեփականությունը»: ■

Կարծիքներ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄՏՆՈ՞ՒՄ Է ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԵՋ

Լիպարիտյան-Ուարթոն, Փափազյան-Կոզիրեւ հանդիպումներ

Մինչ Ադրբեջանն ակտիվորեն ձգտում է Ղարաբաղ-Ադրբեջան հակամարտության շրջանակները լայնացնել եւ պատերազմի մեջ ներգրավել Թուրքիային եւ Իրանին, այնտեղ գործուղելով իր բանագնացներին՝ հանձին Փանահ Հուսեյնովի, Հայաստանը շարունակում է առանց ավելորդ հրապարակման բանակցություններ վարել Արեւմուտքի եւ Հյուսիսի հետ: Համենայն դեպս, Հայաստանի արտգործնախարարության մամուլի քարտուղարի երեկ տված այն հաղորդումը, թե երկուշաբթի օրն արտգործնախարար Վահան Փափազյանը Մոսկվայում աշխատանքային հանդիպում է ունեցել Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւի հետ, վկայում է այդ մասին: Ամենայն հավանականությամբ, մի անգամ եւս ճշտվել են շրջանի նկատմամբ Ռուսաստանի ունեցած դիրքորոշման, Բորիս Ելցինի վերջին միջնորդական առաքելության հետ կապված հարցերը:

Հաջորդ օրը՝ ապրիլի 12-ին, Վաշինգտոնում Հայաստանի արտգործնախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանը հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնակատար Քլիֆթոն Ուարթոնի հետ:

Այդ մասին տեղեկանում ենք Միացյալ Նահանգների լրատվական ծառայության (USIS) տեղեկագրից, որը նշում է, թե Սպիտակ տան խոսնակ Ռիչարդ Բաուչերը հայտնել է նաեւ, որ պետքարտուղարի տեղակալն ընդունել է նաեւ Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովին: Տեղի ունեցած առանձնազրույցների ժամանակ պրն. Ուարթոնը կողմերից պահանջել է, որպեսզի վերջ տրվի դաժան կռվին, եւ Հայաստանն ու Ադրբեջանը վերադառնան ԵԱՀԽ-ի կողմից հովանավորվող բանակցություններին: Խոսնակի ասելով, ԱՄՆ երկու կողմերից պահանջել է նեցուկ կանգնել ԵԱՀԽ խմբի ձեռնարկած բանակցություններին, որը խնդրի խաղաղ կարգավորման լավագույն ուղին է:

Թոֆիկ Ղասիմովի հետ հանդիպման ընթացքում պետքարտուղարի պաշտոնակատարը քննարկել է Քելբաջարի շրջանում հայկական վերջին հարձակումը, որը ԱՄՆ-ն անցյալ շաբաթ պաշտոնապես դատապարտել էր: Իսկ Ժիրայր Լիպարիտյանի հետ հանդիպման ժամանակ պրն. Ուարթոնը կրկին վերահաստատել է էթնիկ հայերի կողմից շարունակվող հարձակման դատապարտումը եւ պահանջել է Հայաստանի կառավարությունից անել ամեն ինչ, որպեսզի վերջ դրվի բախումներին եւ էթնիկ հայկական ուժերը դուրս բերվեն Քելբաջարից: Ու թեեւ պարզ է հայկական կողմի պատասխանը, թե Հայաստանի ուժերը չեն մասնակցել Քելբաջարում ծավալված գործողություններին, այնուամենայնիվ, ստեղծված իրավիճակում, երբ կրկին Ղարաբաղի հարցը դառնում է շահարկման առարկա Արեւմուտքի եւ Հյուսիսի կողմից, ընդեռ հստակ ուրվագծված չէ, թե ինչ կոնկրետ քայլեր կձեռնարկեն ԱՄՆ եւ Ռուսաստանը: Մանավանդ որ Ադրբեջանի նախագահի մամուլի քարտուղար Արիֆ Ալիեւը հայտարարել է, թե Ադրբեջանը նույնպես ըմբռնումով է մոտենում Ռուսաստանի պահանջությանը (Կոզիրեւն ընդունել է նաեւ Ադրբեջանի պետքարտուղար Փանահ Հուսեյնովին), իսկ Նյու Յորքում գտնվող Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովն ակտիվ աշխատանք է տանում ՄԱԿ-ում: Ըստ որում, մեզ հասած հաղորդումների համաձայն, ՄԱԿ-ին կից Իսլամական խորհրդաժողով կազմակերպության անդամ 20 երկրներ արդեն դատապարտել են Հայաստանի «ագրեսիան»: Միեւնույն ժամանակ Նյու Յորքում եւ Վաշինգտոնում գտնվող Ժիրայր Լիպարիտյանի ՄԱԿ-ի եւ Սպիտակ տան շրջանակներում նախատեսվող հանդիպումների մասին առայժմ ոչինչ հայտնի չէ:

Կախված այն բանից, թե որքանով համոզիչ կլինեն հայ դիվանագետների բացատրությունները, ըստ այդմ էլ ԱՄՆ կորոշի իր առաջիկա քայլերը, որոնք, շատ հնարավոր է, դուրս կգան այդքան շոշափվող ԵԱՀԽ շրջանակներից:

ՅԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Ստեփանակերտ

Օգնություն փախստականներին

Ստեփանակերտի թիվ 3 մանկապարտեզը, որտեղ ժամանակավորապես տեղավորվել են երկու տասնյակից ավելի Քելբաջարցի փախստականներ, հրետակոծություններից փրկված հազվադեպ շենքերից է: Այստեղ ապաստան են գտել նաեւ անցած ամռանը Ադրբեջանի կողմից բռնազավթված Մարտակերտի շրջանի փախստականները: Ընդհանուր դժբախտությամբ հարազատացած հայերին եւ ադրբեջանցիներին մանկապարտեզի աշխատողները հոգատարություն են ցուցաբերում: Փախստականների թվում է Քելբաջարի շրջանի Քիլսալի գյուղի բնակչուհի 20-ամյա Գյուլջամալ Բունիաթ կըզի Կուլիեւան, որը շուտով պիտի մայրանա: Նրա նկատմամբ առավել հոգատարություն է դրսեւորվում: «Ես խորապես զգացված եմ հայ բժիշկների սրտացավ եւ բարի վերաբերմունքից,- ասում է նա, հատկապես մանկապարտեզի վարիչ Լյուդմիլա Սիմոնյանից: Չէի սպասում, թե Ղարաբաղում ինձ այսպիսի ընդունելություն ցույց կտան: Միակ խնդրանքս է, Մինգեչաուրում ապրող հարազատներիս հայտնեք, որ չանհանգստանան»:

ԼՂՀ Նախարարների խորհրդին կից բռնագաղթվածների եւ մարդասիրական օգնության վարչության պետի տեղակալ Ս. Առուշանյանի վկայությամբ, փախստականներին բաշխվում է պարեն, ցուցաբերվում բժշկական օգնություն:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Ստեփանակերտ

Բաքու

ԱՄՆ-Ադրբեջան առեւտրական պայմանագիր

Ինչպես հաղորդում է USIS-ը, ապրիլի 12-ին Վաշինգտոնում Մ. Նահանգներն ու Ադրբեջանը կնքեցին բնականոն առեւտրական հարաբերություններ հաստատելու պայմանագիր: Այն ստորագրվեց ԱՄՆ առեւտրի նախարարության ներկայացուցիչ Միքի Քանտորի եւ Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովի կողմից: Ներկա պայմանագիրը կարեւոր երաշխիքներ է տալիս ամերիկացի գործարարներին, ովքեր գործարքներ են կնքում Ադրբեջանում, եւ լավ հիմքեր է ստեղծում այդ երկրում շուկայական տնտեսության համար, հաղորդեց Քանտորը: Պայմանագիրը «նախապատիվ» (MFN) կարգավիճակ է տալիս Ադրբեջանից Մ. Նահանգներ ներմուծվող ապրանքներին: Առանց նման պայմանագրի այդ ապրանքների տարիֆը պիտի լինի շատ ավելի բարձր: ԱՄՆ-ի հետ նման պայմանագիր չկնքած երկրները շատ չեն՝ Կամբոջան, Կուբան, Լաոսը, Հյուսիսային Կորեան, Ռումինիան եւ Վիետնամը, իսկ նախկին խորհրդային հանրապետություններից՝ Վրաստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը: ■

Ղասիմովը տեղեկացնում է «ագրեսիայի» մասին

Ինչպես հաղորդեց Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայությունը, Նյու Յորքում արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովն արտակարգ հանդիպում է ունեցել ՄԱԿ-ին կից Իսլամական համաժողով կազմակերպության անդամ երկրների մշտական ներկայացուցիչների հետ: Օրակարգում էր Ադրբեջանի արեւմտյան եւ հարավ-արեւմտյան շրջաններում Հայաստանի զինված գործողությունների գնահատման հարցը: Ղասիմովը մանրամասն տեղեկացրեց դեսպաններին Հայաստանի «զինված ագրեսիայի» մասին: Իսլամական համաժողով կազմակերպության անդամ երկրները միասնական գնահատական տվեցին Հայաստանի զինված ներխուժմանը: Ավելի քան 20 երկրների մշտական ներկայացուցիչները միահամուռ դատապարտեցին Հայաստանի «ագրեսիան»: Հանդիպման վերջում ընդունած փաստաթղթում Հայաստանի «ագրեսիան» Ադրբեջանի դեմ դատապարտվել է: Իրանի դեսպանի առաջարկությամբ, Իսլամական համաժողով կազմակերպության անդամ երկրների խմբի շրջանակներում ստեղծվել է շփման խումբ, որը կհետեւի շրջանի իրավիճակի զարգացմանը: Սնարք

Արտգործնախարարը գործում է

Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայության լրատվության համաձայն, հանրապետության արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովը Նյու Յորքում հանդիպեց մարդասիրական հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, միջազգային արտակարգ օգնության կոորդինատոր Յան Էլիասոնի հետ: Զրույցի ընթացքում Ղասիմովը տեղեկացրեց Էլիասոնին Հայաստանի «ագրեսիայի» ծավալման ու տարածքային կորուստների մասին: Նախարարը նշեց, որ, Ադրբեջանում գտնվող 496 հազար փախստականներին ավելացել են 45 հազարը Քելբաջարի շրջանից: Եւս 20 հազար է վտարվել են Ֆիզուլու շրջանից: Էլիասոնը նշեց, որ ՄԱԿ-ն ըստ երեւույթին հիմնովին կվերանայի Ադրբեջանին օգնելու 1992 թ. դեկտեմբերին ընդունած իր ծրագիրը, հաշվի առնելով փախստականների քանակի զգալի աճը: Սնարք

Էլչիբեյ. Պատրաստ լինել ծանր աշխատանքի

Ա. Էլչիբեյը հայտարարել է, որ յուրաքանչյուր գերատեսչության աշխատանք պետք է ենթարկվի հետեւյալ կարգախոսին. «Ամեն ինչ Ադրբեջանի տարածքային ամբողջականության պահպանման, ժողովրդավարության փրկության համար»: Նա երկուշաբթի ելույթ է ունեցել կառավարության ընդլայնված նիստում, որտեղ քննարկվել են արտակարգ դրության պայմաններում աշխատելու ռեժիմը եւ նախարարությունների գործունեության վերակառուցման միջոցառումները: «Մենք պետք է հանուն հայրենիքի պատրաստ լինենք ծանր, լարված եւ երկարաժամկետ աշխատանքի», ընդգծել է նախագահը: ՌՖ

Կարճ

Միջազգային դիտորդները ժամանեցին Հայաստան

Ապրիլի 12-ին Երեւանում ՄԱԿ-ի գրասենյակի փոխտնօրեն Ծարիան Մակինոնը հնարավորություն է ստացել ուղղաթիռով այցելել Հայաստանի Հանրապետության սահմաններ՝ ծանոթանալու այնտեղ տիրող իրադրությանը: Այդ մասին մեզ տեղեկացրեց արտգործնախարարության մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանը, բայց նաեւ նշեց, թե ինքը տեղյակ չէ, թե ինչպիսի լրատվությամբ է վերադարձել սահմանամերձ շրջաններից: Միեւնույն ժամանակ, երեկ Երեւան է ժամանել ԵԱՀԽ շրջանակներում գործող դիտորդների միջազգային խումբը, որի կազմում են տարբեր ազգությունների 10 ներկայացուցիչներ: Խումբը ղեկավարում է ֆինլանդացի փոխգնդապետ Հեկի Հաղոնենը: Նրանք ժամանել են Բաքվից, եւ մամուլի քարտուղարի ասելով, կլինեն ոչ միայն սահմանամերձ շրջաններում, այլեւ Ղարաբաղյան հակամարտության գոտում: Դիտորդներին արդեն ընդունել է արտգործնախարար Վահան Փափազյանը:

Ըստ որում, դիտորդների թվում ոչ միայն դիվանագետներ են, այլեւ զինվորականներ:

«Ազգ»

Հայաստան-Չիլի-Մալայզիա դիվանագիտական կապեր

Հայաստանի արտգործնախարարության մամուլի ծառայությունից տեղեկացանք, որ դիվանագիտական նոտաների փոխանակման ճանապարհով Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Չիլիի Հանրապետության եւ Մալայզիայի Հանրապետության հետ: ԱԳՆ մամուլի քարտուղարը նշեց, թե այդ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը «մեզ համար շատ կարեւոր իրադարձություն է»:

«Ազգ»

Պատերազմ

Բաքուն անտարբեր համաքաղաքացիների ճակատագրին

Ստեփանակերտ, 13 ապրիլ, Սնարք: Ադրբեջանական կողմը հրաժարվեց բանակցություններ վարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների հետ պատանդների փոխանակման հարցով:

Ինչպես հայտնի է, վերջերս շրջանում տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքով, Լեռնային Ղարաբաղի տարածքում հայտնվել են ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիներ, այդ թվում կանայք, երեխաներ, ծերեր: Այդ կապակցությամբ ԼՂՀ ռազմագերիների հարցերով պետական հանձնաժողովի հանձնարարությամբ, Հելսինկյան նախաձեռնություն-92-ի Լեռնային Ղարաբաղի կոմիտեի համակարգող Կարեն Օհանջանյանը հեռախոսազրույց է ունեցել կառավարության փոխվարչապետ, Ռուսաստանում Ադրբեջանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ Հիքմեթ Հաջիզադեի հետ, առաջարկելով պայմանավորվել Ադրբեջանի իշխանությունների հետ պատանդների փոխանակման վերաբերյալ: Սակայն ադրբեջանական կողմը ցանկություն չի հայտնել խոսել ԼՂՀ ներկայացուցչի հետ, նախընտրելով գործ ունենալ Հայաստանի հետ:

«Նկատվում է նույն պատկերը. Ադրբեջանը համառորեն ձգտում է Հայաստանին ներկայացնել որպես ագրեսորի», ասաց ԼՂՀ լրատվության եւ մամուլի դեպարտամենտի ղեկավար Մարսել Պետրոսյանը: «Նման անհեթեթ տրամաբանությունը, շարունակեց նա, կարող է հանգեցնել անհերքելի հետեւանքների: Ասենք, երբ պատանդները գտնվում են ԼՂՀ տարածքում, իսկ Ադրբեջանը նախընտրում է նրանց ճակատագրի մասին խոսել Հայաստանի հետ, հետեւաբար Ադրբեջանի ղեկավարությունն ակամա Ղարաբաղը համարում է Հայաստանի մաս»: «Այդպես թե այնպես, ես խորհուրդ կտայի Ադրբեջանի իշխանություններին ավելի մեծ պատասխանատվությամբ վերաբերվել իր քաղաքացիների ճակատագրին», վերջում ասաց Մարսել Պետրոսյանը: ■

Շրջան

Սիրիան անհանգստացած է Ղարաբաղյան խնդրով

«Ազգ»-ն արդեն հաղորդել է, որ ապրիլի 3-8 Սիրիայի Արաբական Հանրապետությունում էր գտնվում Հայաստանի արտգործնախարար Վահան Փափազյանը, որը պաշտոնական բանակցություններից բացի մասնակցեց Հայաստանի դեսպանատան բացման հանդիսավոր արարողությանը:

Անդրադառնալով Հայաստանի պատվիրակության այցի արդյունքներին, ՀՀ արտգործնախարարության մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանը երեկ կայացած բրիֆինգում հայտարարեց, որ Սիրիայում Հայաստանի դեսպանատան բացումը պատմական իրադարձություն էր: Պրն. Սաֆարյանը մասնավորապես նշեց, որ Հայաստանի Հանրապետության դրոշի օծման հանդիսավոր արարողության ժամանակ արտգործնախարար Վահան Փափազյանը հայտարարել է, թե դեսպանատան պաշտոնական բացմամբ հայ-սիրիական հարաբերությունները թեւակոխում են զարգացման նոր փուլ, եւ դրանց ձեւավորման գործում կարեւոր ներդրում են ունեցել նախագահներ Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Հաֆեզ ալ Ասադը:

Միեւնույն ժամանակ, Սիրիայի արտգործնախարար Ֆարուք ալ Շարաայի հետ առանձնազրույցի ժամանակ սիրիական կողմն անհանգստություն է հայտնել ղարաբաղյան հակամարտության սրման եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների հետագա լարման կապակցությամբ:

Վահան Փափազյանն իր կողմից նշել է, որ Հայաստանը շրջանում իրադրության կտրուկ սրման հետ որեւէ առնչություն չունի, հակառակ Թուրքիայի եւ Ադրբեջանի ձեռնարկած քարոզչական ջանքերի: Հայաստանի արտգործնախարարը նշել է նաեւ, որ Հայաստանը միշտ էլ եղել է Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական կարգավորման կողմնակից եւ այժմ էլ շարունակում է հավատարիմ մնալ այդ սկզբունքին: Շուրջ հինգ տարի Հայաստանը ճիգեր է գործադրել բանակցությունների սեղանի շուրջ նստեցնել հակամարտող երկու կողմերին՝ Ադրբեջանին եւ Լեռնային Ղարաբաղին, սակայն Ադրբեջանը միշտ էլ հրաժարվել է խնդրի կարգավորման քաղաքակիրթ միջոցներից:

Այնուհետեւ Վահան Փափազյանը հայ-սիրիական քաղաքական եւ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացմանն առնչվող մի շարք հարցեր է քննարկել Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի եւ նախարարների խորհրդի նախագահ Մահմուդ ալ Զոնբիի հետ ունեցած առանձնազրույցների ժամանակ: Մամուլի քարտուղարը նշեց նաեւ, թե Հայաստանի նկատմամբ Թուրքիայի կողմից միակողմանիորեն իրականացվող արգելափակման պատճառով Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը հայրենիք վերադարձավ Դամասկոս-Փարիզ-Երեւան երթուղով: Այդ կապակցությամբ պրն. Սաֆարյանը խեղաթյուրված եւ անստույգ համարեց «Երկիր» օրաթերթում հրապարակված այն տեղեկատվությունը, ըստ որի իբր նախարարը մնացել է Սիրիայում: Մամուլի քարտուղարը նշեց, որ նախարարը եւ Հայաստանի պատվիրակության անդամները 12 ժամ ուշացումով այնուամենայնիվ հասել են Հայաստան, իսկ այն լրագրողները, որոնք կշարունակեն ապատեղեկատվություն տարածել, կզրկվեն ԱԳՆ հավատարմագրությունից:

Հ. Ա.

Մեդիա

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԱՆԿՅՈՒՆ Է ՔՇՎԵԼ

Գանձակից Հյուգ Պոուփ «Լոս Անջելես թայմս» թերթի վաշինգտոնյան հրատարակության ապրիլի 7-ի համարում գրում է.

Ոստիկանության մայոր Չենգիզ Աբբասովն ու նրա սպառված ջոկատի անդամները ընկել կամ ընկողմանել են իրենց հրացանների վրա, խմորեղենով մազերով, փաստ հայերի հետ 5 տարվա պատերազմի ընթացքում Ադրբեջանի կրած ամենածանր պարտություններից մեկից հետո. «Երեք օր ու գիշեր տեւեց, մինչեւ հասանք այստեղ: Սրանցից բացի, ուրիշ հագուստ չունենք: Նրանց հրետանին պարզապես շատ ճշգրիտ էր խփում: Հնարավորություն չունեինք: Այս ամենը ռուսների արածն է», ասում է Աբբասովը հազալով, այնքան խոր, որ գրեթե գետին է ընկնում:

Ադրբեջանը նույնպես երեւում է, նվաստացած վերջին օրերին կրած պարտությունից, որի ընթացքում կորցրել է մոտավորապես 10 տոկոսն իր տարածքների, որոնք անցել են հայ կռվողների ձեռքը, որոնց երկրի բնակչությունը կեսն է կազմում 7 միլիոն ադրբեջանցիների քանակի եւ ուրիշ շատ փոքր մի մասնիկը նրա ունեցած բնական հարստությունների: Ադրբեջանը Մոսկվայի ազդեցությունից դուրս հանելու խոստումով իշխանության եկած Աբուլֆազ Էլչիբեյին ընտրելուց հազիվ տաս ամիս հետո, ներկայումս բազմաթիվ ադրբեջանցիներ, Աբբասովից մինչեւ Բաքվում նստած ղեկավարները, նախընտրում են իրենց պարտության համար պատճառ բռնել ռուսական ռազմական միջամտությունն ի վնաս իրենց:

Ռուսաստանը կտրուկ հերքում է այդ եւ, համենայնդեպս, ցարդ ոչ ոք չի ապացուցել, որ նա բարոյական նեցուկից զատ ուրիշ որեւէ բան է տվել Հայաստանին:

Օտարերկրյա դիվանագետներն ավելի կարեւոր պատճառներ են մատնանշում Քելբաջարի կորստի համար՝ գզվռտոցը ադրբեջանական ղեկավարության ներսում, անհամաձայնություններ զինվորական 4 կազմակերպությունների միջեւ եւ ադրբեջանականության մասին այնպիսի անվստահ տեսակետներ, որ ոչ ոք դեռեւս չգիտի, թե ինչպես պետք է կոչել իրենց ազգային լեզուն:

«Հայերը գրավել են 7500 քառ. կմ ադրբեջանական տարածք, մեր երկրի մոտ 4 տոկոսը: Սա այլեւս պարզապես Լեռնային Ղարաբաղի հարց չէ, այլ ներխուժում գերիշխան մի երկիր, չհայտարարված պատերազմ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ», ասում է Ադրբեջանի արտգործնախարարության բանբերներից Թոֆիկ Զուլֆիկարը: Վերջինս բաց է անում 1992 թ. Երեւանում հայ ազգայնականների կողմից մի քարտեզ, որ ցույց է տալիս ավելի մեծ Հայաստան, ինչը ներկայումս գրեթե իրականացել է: Սկսելով անցյալ մայիսին բացված առաջին միջանցքից, Լեռնային Ղարաբաղն այժմ Հայաստանին է միացել 60x30 մղոն ադրբեջանական մի գոտիով:

Հայերն ասում են, թե ներկա հարձակումները ձեռնարկել են ուժեղացնելու համար սկզբնական միջանցքը, որ կենսական կապն է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ սննդեղենի եւ ապրանքների փոխադրության համար այն պայմաններում, երբ Հայաստանն ինքն է տառապում շրջափակման եւ Վրաստանի գազատարի պայթեցումների հետեւանքով:

Հայաստանի կառավարությունը պնդում է, իբր ոչ թե իր բանակը, այլ Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերն են մղում պատերազմը: Ադրբեջանցիներն անհամոզիչ են գտնում այն:

«Ո՞րն է տարբերությունն այստեղի եւ Բոսնիայում սերբերի արածի միջեւ: Աշխարհը ե՞րբ է հավատալու, որ հայերի ուզածն ավելի մեծ Հայաստանն է: Մենք չենք հավատում, որ նրանք կանգ կառնեն այնտեղ, որտեղ գտնվում են այսօր», ասում է Գանձակում ապայակույտի սպաներից մեկը:

Ծանր ռմբակոծությունը շարունակվում էր վիճելի անկլավի հարավում, որը երեւանյան քարտեզի մեջ նշված էր որպես «հայկական պատմական տարածքներ»: Ֆիզուլի եւ Ղուբաթլի քաղաքներից բնակչության մեծ մասն արդեն փախուստ է տվել դեպի արեւելք, սակայն Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարում է, թե իր զորքին հաջողվել է ետ մղել հայերի գրոհն այդ երկու քաղաքների վրա:

Դեպի հյուսիս ավելի քան 40 հազար ադրբեջանցիներ, հյուծված փախստականներ դանդաղ վայր են սահում Մռով լեռան լանջերից, իրենց ոչխարների, ավարի եւ եզերի հետ: Նրանց հաշվետվությունը լուրջ կասկած է գցում հայերի այն պնդման վրա, թե իբր վերջին գործողությունները պատասխան են Լեռնային Ղարաբաղի անկանոն զորքի կողմից: Ադրբեջանցի քուրդ հովիվները, գյուղական ոստիկանները ու Աբբասովի նման վիրավոր զինվորներն առանձին-առանձին եւ քանիցս վկայեցին քարտեզի վրա, թե ինչպես են իրենք հայերի հարձակմանը ենթարկվել երկու կողմից՝ Լեռնային Ղարաբաղից եւ Հայաստանի կողմից:

Ադրբեջանի միակ իրական դաշնակիցը՝ Թուրքիան, իրեն դավաճանված է զգում իր խաղաղարար ճիգերի մեջ: Նախագահ Թուրգութ Օզալն ասում էր, որ Թուրքիան «պետք է իր ատամները ցույց տա»: Եւ թվում է, որ առավելապես Մ. Նահանգներն է հետ պահում Թուրքիային որեւէ քայլ անելուց:

Մինչդեռ շատ քիչ հույս կա, որ Ադրբեջանի կառավարությունը կկարողանա իր ուժերով հակահարձակումը շղթայազերծել:

Հայերի ձեռնարկած հարձակումից միայն 10 օր հետո ադրբեջանական հրասայլերն ի վերջո ժամանեցին ճակատային գիծ՝ Մռով լեռան մոտակայքը: Ոգեւորված երիտասարդ նորակոչիկները կոտրում էին արկղերը եւ 130 մմ արկերը մտցնում իրենց խորհրդային հրասայլերի բերանը, կամ պատռում-հանում հրթիռների պլաստիկե տուփերը, կամ մարտագլխիկներն ամրացնում արկերին:

Սակայն նոր ժամանած այդ պատանի զինակոչիկներից շատերն ընդամենը երկու ամսվա մարզված են եւ նրանց 20 տարվա հնության ինքնագնաց հրանոթները, ժառանգ մնացած հեռացած նախկին խորհրդային զորքի կողմից, այնքան էլ սարքին վիճակում չեն: Նրանց օգնության հասած T-72 հրասայլերից մեկի վառելանյութն սպառվել էր արդեն:

Մի քիչ այն կողմ հավաքվել են փախստականներից ոմանք, հուսալով որեւէ լուր ստանալ Քելբաջարի շրջանում մնացած իրենց ազգականներից: Ժամանակին այնտեղ 65 հազար ադրբեջանցի էր ապրում: Ուրիշները լեռան ստորոտում սպասում են ժամանակավոր պատսպարաններ ստանալու: Շրջանի գլխավոր բժիշկ Ալլան Մամեդովն ասում է, թե փախստականներից 42 մահացած է գրանցել: Շուրջ հարյուր հոգի բժշկական խնամք են ստացել սառցահարության դեմ:

Los Angeles Times

Կարճ

Հայաստանն ո՞վ դուրս կբերի ճգնաժամից

Երեւան, 13 ապրիլ, Սնարկ: Հայաստանը խոր ճգնաժամից կարող է դուրս բերել «նոր, իմաստուն ղեկավարը», գտնում է հանրապետության Ազգային ակադեմիայի սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի հարցման ենթարկված հազար անձանց 28,4 տոկոսը: Հարցման մասնակիցների 55,7 տոկոսը դժվարացել է պատասխանել այն հարցին, թե ժամանակակից քաղաքական գործիչներից կամ հայտնի մարդկանցից ում կուզենար տեսնել բարձրագույն ղեկավարների թվում: Անվանի ղեկավարի բացակայության պայմաններում ամենից հաճախ (10,4 տոկոս) նշվում է ներկայիս նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը (նախագահական ընտրությունների ժամանակ նա ստացել էր 83 տոկոս): 8,6 տոկոս արդյունքով երկրորդ տեղում է ՀԿԿ կենտկոմի նախկին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը: Ցանկում երրորդը նախկին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանն է (5 տոկոս): Առաջին ութնյակի մեջ մտնում են նաեւ ՀԿԿ ԿԿ նախկին առաջին քարտուղարներ Սուրեն Հարությունյանը եւ Վլադիմիր Մովսիսյանը: Ինչպես Սնարկի թղթակցին ասաց կենտրոնի տնօրեն Գեւորգ Պողոսյանը, նշված 84 անձանց մեջ են նաեւ Ջորջ Բուշը, Մարգարեթ Թետչերը, Լեոնիդ Բրեժնեւը, Իոսիֆ Ստալինը, Տիգրան Մեծը: ■

Տարեվերջին Երեւանում գործազրկությունը կհասնի 10 տոկոսի

Երեւան, 13 ապրիլ, Սնարկ: Միայն ընթացիկ տարվա առաջին երեք ամսում Երեւանի զբաղվածության կենտրոնին դիմել է 3800 մարդ: Ինչպես Սնարկի թղթակցին հայտնեց կենտրոնի տնօրեն Խորեն Գարանյանը, 600 հազար աշխատունակ բնակիչ ունեցող քաղաքում այսօր հաշվառման մեջ է 16130 երեւանցի, այդ թվում 13500-ն ունի գործազուրկի կարգավիճակ եւ նպաստ է ստանում: Սակայն, նշեց Գարանյանը, Հայաստանի շարունակվող շրջափակման եւ տնտեսական ճգնաժամի պայմաններում մինչեւ տարեվերջ Երեւանում գործազրկության մակարդակը կհասնի մինչեւ 10 տոկոսի: Գործազուրկների 80 տոկոսը կկազմեն բարձրագույն կրթությամբ մասնագետները: ■

Հայ-իրանական սահմանամերձ առեւտուր

ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից մեզ հայտնեցին, որ Հայաստանի եւ Իրանի միջեւ կնքված առեւտրատնտեսական համաձայնագրով սահմանամերձ առեւտուր կազմակերպելու համար ՀՀ կառավարության 1993 թվականի ապրիլի 8-ի թիվ 161 որոշմամբ հանձնարարվել է.

Պատգամավորների Մեղրու շրջանային խորհրդի գործադիր կոմիտեին՝ տոնավաճառի կազմակերպման նպատակով Ագարակ ավանին հարակից տարածություններից սահմանված կարգով 2,5 հեկտար հող հատկացնել նյութական ռեսուրսների նախարարությանը:

ՀՀ արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվել է էկոնոմիկայի նախարարության, նյութական ռեսուրսների նախարարության եւ մաքսային վարչության հետ համատեղ մեկամսյա ժամկետում մշակել եւ ՀՀ կառավարություն ներկայացնել իրանական կողմի հետ նախապես համաձայնեցված սահմանամերձ առեւտրի շրջանակներում մշտապես գործող տոնավաճառի կազմակերպման համաձայնագրի նախագիծը, իսկ շինարարության նախարարությանը՝ նյութական ռեսուրսների նախարարության պատվիրած նախագծերին համապատասխան իրականացնել շինմոնտաժային աշխատանքներ:

ՀՀ բանկին, Հայարդի բաժնետիրական բանկին, Հայտնտեսագործբանկին հանձնարարվել է տոնավաճառի գոտում կազմակերպել վալյուտայի փոխանակման եւ այլ գործարքների ձեւակերպման բանկային կետ:

ՀՀ հարկային պետական տեսչությանը՝ ֆինանսների նախարարության հետ համատեղ սահմանել տոնավաճառի գոտում միանվագ վճարների չափը եւ դրանց գանձման կարգը:

Որոշման կատարման վերահսկողությունը դրվել է ՀՀ պետնախարար Վազգեն Սարգսյանի վրա: ■

Կապեր

Ստեղծվեց «Հայաստան-Վրաստան» ընկերություն

Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության կոմիտեի շրջանակներում վերջին ամիսների ընթացքում ստեղծվել են մի քանի ընկերություններ՝ հայ-ռուսական, հայ-չինական, որոնք արդեն գործող նման կազմակերպությունների հետ միասին նպատակ ունեն նպաստել կապերի ամրապնդմանը եւ ընդլայնմանը:

Երեկ Երեւանում արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության կոմիտեի շենքում ներկայացվեց «Հայաստան-Վրաստան» մշակութային կապի եւ համագործակցության ընկերությունը, որն առայժմ ինքնուրույն իրավաբանական դեմք չէ եւ գործելու է վերոհիշյալ կոմիտեի կազմում: Ընկերության հիմնադիր ժողովը կայացել էր փետրվարի 23-ին, այդ ժամանակ էլ ընդունվել էր ծրագիրը եւ կանոնադրությունը:

Ընկերությունը մտադիր է իր հնարավորությունները, միջոցները ծառայեցնել հայ-վրացական կապերի սերտացմանը, օգնել ավելի լավ ճանաչել, աջակցել միմյանց: Ինչպես նշեց նորաստեղծ ընկերության նախագահ, Վանաձորի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Տիգրան Ավետիսյանը, քանի որ պետականորեն կատարվող բարեկամական քայլերը դեռեւս այնքան էլ հաջող արդյունքներ չեն տալիս, իրենք պետք է նպաստեն այդ բացը լրացնելուն, ամեն ջանք գործադրելով, որպեսզի Վրաստանի մոտ 750 հազար հայությունը Հայաստանը չընկալի որպես զուտ աշխարհագրական տարածք:

Ընկերությունը համագործակցելու է Հայաստանում գործող վրացահայերի՝ թբիլիսահայերի, ջավախքցիների հասարակական կազմակերպությունների հետ:

Նշենք, որ Երեւանում «Հայաստան-Վրաստան» ընկերության ներկայացման արարողությանը չէին մասնակցում Վրաստանի ներկայացուցիչները, որոնք, ըստ պրն. Ավետիսյանի, չէին ժամանել զուտ տեխնիկական պատճառներով, մասնավորապես, տրանսպորտային միջոցներն էին խոչընդոտ ծառայել: Իսկ երբ Թբիլիսիում նման մի արարողություն տեղի ունենա «Վրաստան-Հայաստան» ստեղծվելիք ընկերության կազմակերպությամբ...

Համենայնդեպս, ելույթ ունեցողների՝ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության կոմիտեի համանախագահներ պրն. Զաքոյանի, Իգիթյանի, Վրաստանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Լեւոն Խաչատրյանի, ՀՀ ԳԱ թղթակից-անդամ, ֆիզիկոս Թինա Սաթիանի, մյուսների խոսքերը կարեւորեցին մեր այս ծանր ժամանակներում հայ-վրացական համագործակցության ընկերության ստեղծումը:

«Հայաստան-Վրաստան» ընկերությունը, գործելով Երեւանի ջէկի հովանավորությամբ, Հենրիկ Իգիթյանի խոսքերով ասած, «ժողովրդական դիվանագիտության» միջոցով կկազմակերպի իր գործունեությունը»:

Ընկերության ներկայացման արարողությունն «ամրագրվեց» արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության կոմիտեի շենքում բացված տաղանդավոր նկարիչ Հովսեփ Կարալյանի աշխատանքների ցուցահանդեսով:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Միջպետական

Հայաստան–Ռուսաստան 1993 թ. պայմանագրերը պատրաստվում են

ՀՀ կառավարության մամուլի ծառայությունը տեղեկացրեց, որ ՀՀ կառավարությունը 1993 թ. մարտի 31-ին ընդունել է թիվ 139 որոշումը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության եւ Դաշնակցային Ռուսաստանի միջեւ 1992 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված համաձայնագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովմանը:

Ձեւավորված տնտեսական կապերի պահպանման եւ զարգացման նպատակով, ինչպես նաեւ հիմնվելով էներգետիկայի, արդյունաբերության, տրանսպորտի, կապի եւ այլ ոլորտների աշխատանքների համակարգման մասին կնքված համաձայնագրերի վրա եւ, ելնելով Հայաստանի Հանրապետության եւ Դաշնակցային Ռուսաստանի միջեւ բարեկամական հարաբերությունների համար բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտությունից, ՀՀ կառավարությունը նախարարություններին, պետական վարչություններին, գերատեսչություններին, ձեռնարկություններին եւ կազմակերպություններին հանձնարարել է 10-օրյա ժամկետում ավարտել միջկառավարական համաձայնագրերի հավելվածներում նշված ծավալների համար 1993 թվականի տնտեսական պայմանագրերի կնքումը: ■

Հայտարարություն

Գործազրկությունը դարձել է մեր ժամանակի ամենամեծ սոցիալական չարիքը:

Իրադարձությունների ընթացքը ցույց է տալիս, որ առաջիկայում այն ավելի կխորանա, հարյուր հազարավոր մարդկանց զրկելով գոյության նվազագույն միջոցներից: Այսօրվա համակարգում գործազուրկը մնում է միայնակ դեմ հանդիման կյանքի բազում ծանր խնդիրներին: Այս մտահոգություններով հիմնադրվել է ՀՀ գործազրկությունից պաշտպանության հասարակական հիմնադրամը, որի նպատակն է՝

● աջակցել գործազուրկների սոցիալական պաշտպանվածության խնդիրների լուծմանը, պետական եւ այլ կառույցներում հանդես գալ նրանց շահերի պաշտպանությամբ

● գործազուրկի հետ անցկացնել իրավական կոնսուլտացիա, որի անմիջական խնդիրն է՝ նրան հանգամանորեն պարզաբանել օրենքով իր համար սահմանված իրավունքները եւ շահերի պաշտպանության մեխանիզմները: Օժանդակել նրան աշխատանքի տեղավորման եւ կազմակերպչական այլ հարցերում

● վերահսկողություն սահմանել բնակչության զբաղվածության եւ սոցիալական ապահովությանն ուղղված պետական ծրագրերի կատարման նկատմամբ:

Ս. թ. ապրիլի 20-ից հիմնադրամն սկսում է գործազուրկների գրանցումը: Բոլոր գործազուրկները կարող են դիմել ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Միությունների տուն, I-ին հարկ, 20 սենյակ, «Միաբանություն» արհմիության գրասենյակ:

Հայաստանի գործազրկությունից պաշտպանության հասարակական հիմնադրամի հիմնադիր խորհուրդ
«Միաբանություն» արհմիության լիազոր ներկայացուցիչների խորհուրդ

Ամբիոն

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿԱՄՔՆ ՈՒ ՁԳՏՈՒՄԸ.

Ներկա օրերին, երբ ռազմաճակատից ստացվող տեղեկությունները հուսադրող են եւ հայկական զենքի հաջողություններն են մատնանշում, երդվյալ խաղաղասերի սույն հոդվածի հրապարակումը մեր կողմից չի պայմանավորված ռազմական հաջողություններն ստվերածելու ցանկությամբ, եւ ոչ էլ ընդհանուր ոգեւորությունից մեկուսանալու միտումով, այլ՝ զգոնությունը, բանակցություններով խաղաղության հասնելու մեր սեւեռակետը չկորցնելու մտահոգությամբ:

Հիմա մեզանում վտանգաւոր է հաշտութիւն եւ խաղաղութիւն բառերն արտասանելը, իսկոյն մեղադրւում են պարտուողականութեան ու դաւաճանութեան մէջ: Հինգրոպէանոց հեռուստատեսային ելոյթիս ժամանակ գործածեցի խաղաղութիւն բառը՝ ասելով սոսկ, որ մեզ պէտք է խաղաղութիւն: Եւ այդքանը բաւական էր, որ մեր թերթերը երեք անգամ հայհոյեն ինձ՝ ներկայացնելով լալկանութեան եւ դաւաճաններին աջակցելու մեղադրանքներ:

Այնուամենայնիւ, պարզ տեսնում եմ, որ խաղաղութիւնը այս փոքրիկ Հայաստանի համար կեանք է, պատերազմն ի վերջոյ...

Պատերազմը ժողովրդին գազանացնում է, նրա մէջ ատելութեան բոյն կուտակում, պատերազմն անլոյս երեկոյ է, ցուրտ ու քաղց, Հայաստանի ծառազրկում, հիւանդութիւնների ու մահերի առատացում: Պատերազմը մանաւանդ հայ երիտասարդների զանգուածային մահ է եւ հաշմութիւն: Պատերազմը արեան ու դիակների առատութիւն է, հարազատների անվերջ սուգ ու կսկիծ: Պատերազմը հազարաւորների թշուառութեան հաշուին սրիկաների միլիոններ կուտակելն է: Պատերազմը գողերի ու աւազակների ազատ կողոպուտն ու մարդասպանութիւնն է: Պատերազմը բախտախնդիրների պաշտօնաւորումն է: Պատերազմը բացարձակ անբարոյականութիւն է եւ ժողովրդի բացարձակ անբարոյականացում:

Ես պատերազմի, ռազմաճակատի դառնութիւնը ճաշակել եմ մինչեւ մրուրը, արիւնս էլ է թափուել, դիակների մէջ էլ եմ պառկել: Եւ ինչքան մտածում եմ, որեւէ լաւ բան պատերազմի մէջ չեմ գտնում:

Հայաստանից որպէս փշրանք մնացած այս 29 հազար քառակուսի կիլոմետրանոց հատուածի ու Ղարաբաղի համար վախենում եմ: Մեր այս միակ ու վերջին հայրենիքի համար շատ եմ զգուշանում: 1988-ին էլ էի զգուշանում եւ կտրականապէս դէմ էի Մոսկուայից Ղարաբաղ պահանջելուն: Մօտ անցեալի պատմութիւնն ինձ ասում էր, որ հայ-թուրքական վէճերում Ռուսաստանը ի վերջոյ թուրքերին է պաշտպանել, որ Մոսկուան մեզ կռուեցրել է եւ կռուեցնում է հարեւան Ադրբեջանի հետ: Իսկ հիմա էլ, այո, դէմ չէ, որ յաղթանակներ տանենք, Ադրբեջանը նեղն ընկնի ու իրեն Մոսկուային զիջումներ անի, մտնի ԱՊՀ-ի կամ Մոսկուայի գերիշխանութեամբ ստեղծուելիք մի այլ միութեան մէջ (որից յետոյ Ղարաբաղը կցանկայ տալ Ադրբեջանին, ինչպէս 21 թուին տուեց):

Մենք անցած 200 տարում գործիք ենք եղել ու հիմա էլ գործիք ենք եւ գործիք լինելով կոտրուել ենք, կորցրել եւ հիմա էլ այդ վտանգի տակ ենք:

Մենք այժմ չորս կողմից շրջապատուած ենք թուրքական տարրով՝ արեւմուտքից Թուրքիան (մօտ 60 միլիոն), հարաւից Հարաւային Ադրբեջանը (մօտ 20 միլիոն), արեւելքից Հիւսիսային Ադրբեջանը (մօտ 7 միլիոն), հիւսիսից Բորչալուի ադրբեջանցիները (մօտ 1 միլիոն): Սա է երեքուկէս միլիոնանոց Հայաստանի դիրքը: Եւ դա մշտական դիրք է: Ուրիշ Հայաստան էլ չկայ: Թուաբանական հաշիւ անենք եւ ըստ այդմ մշակենք մեր քաղաքականութիւնը:

Այսպէս, Ադրբեջանը մեր յաւիտենական հարեւանն է, անկախ այն բանից, թէ դա մեզնից շատերին դուր է գալիս, թէ՝ ոչ: Եթէ Հայաստանն այսուհետեւ գոյատեւելու է 10 հազար տարի կամ աւելի, միշտ Ադրբեջանի կողքին է լինելու: Սա անվիճելի է: Որքա՞ն է բանական ու տրամաբանական մշտական հարեւանի հետ այսպէս կատաղօրէն թշնամանալը, միմեանց անգթօրէն խոցոտելն ու ոչնչացնելը:

Գիտեմ նաեւ, որ մեր արեւմտեան հարեւանը Ղարաբաղի պատերազմի անվերջ դիտողի դերում չի մնալու, միջամտողի դեր է ստանձնելու: Ռուսաստանի գլուխը խառնուել է, չի բացառում քաղաքացիական պատերազմը, ԱՄՆ-ը կամ մէկ ուրիշը մեզ զինուժով երբեք չեն օգնելու: Մենակ ենք:

Լրագրերի էջերում «հերոսացողները» թող լաւ ծանրութեթեւ անեն: Նրանց համար խաղաղութիւն բառը նոյնն է, ինչ որ կարմիր պաստառը խաղանական ցուլի համար: Անմիջապէս դոզահարում են: Նրանք լրագրերի էջերում յարձակւում են, յաղթում, գրաւում, թշնամուն ջարդում, փշրում, խաղաղասէրներին հայհոյում, բայց ոչ իրենք են գնում ռազմաճակատ, ոչ էլ իրենց զաւակներին են ուղարկում «մեռնելու յանուն հայրենեաց»: Ճիշտ կլինի թերթերի էջերում «հերոսացող» իւրաքանչիւր հեղինակի ձեռքն անմիջապէս զէնք տալ եւ ուղարկել պատերազմի առաջին գիծ:

Յիշեցնեմ՝ 1915-ի նախօրեակին էլ կային մարդիկ, ովքեր վախենում էին Երկրի համար եւ մեր «հերոսացողներին» ասում՝ «Մի՛ խառնուէք կրակի հետ», «Վազն անցէք այդ Հայկական հարցից, դա հայութեան կործանման ծուղակ է»: «Ուժեղները մեզ խաբում եւ օգտագործում են», «Մի՛ գրգռէք թուրքերի մոնղոլական արիւնը», «Կամաւորական շարժումից ձեռք քաշէք», «Ժողովրդին կոտորել կտաք», «Երկիրը կկորցնենք»: Չլսեցին: Եւ Երկիրն ու երկու միլիոն հայ կորցրինք: Մեր հինգհազարամեայ հարազատ Երկիրը: Այս կտորը մնաց, եւ դարձեալ լրագրերի էջերում, հաւաքներում այն օրերի «հերոսական» կեցուածքով նոյն երգն են երգում՝ յաղթենք, ջարդենք, Ռուսաստանը մեզ հետ է եւ այլն: Կարծես ժամանակին այդպէս չեն գոռացել, կարծես եղեռն չի եղել: Մոռացուել են անցեալի ահաւոր սխալներն ու անփոխարինելի կորուստները: Նոյն 1890-ական թուականների մակարդակն է:

Խաղաղապաշտութիւնը (պացիֆիզմը) մի կողմ դնենք, հարցին մօտենանք քաղաքական-ռազմական տեսակէտից՝ նկատի առնելով հետեւեալ ճշմարտութիւնները. 1. Ազգերի ինքնորոշումը կեղծիք է, հնարուած մեծ պետութիւնների կողմից փոքր ազգերին խաբելու համար: 2. Պատմական գործօնը քաղաքականութեան մէջ բացարձակապէս արժէք չունի: ԱՄՆ-ի եւ Կանադայի տարածքները պատմականօրէն Հիւսիսային Ամերիկայի բնիկներինն են, որոնց կոտորել են (ցեղասպանութիւն), մնացածներին քշել մեկուսավայրեր: Հիմա նրանց ոչ ոք հող չի տայ: Վոլգան ու շրջակայքը եղել են տեղի բնիկներինը, հիմա համարւում է ռուսական մայր գետ: Ուժով գրաւել են: Սիլեզիան, Պրուսիան, Սուդետները գերմանական հողեր էին, հիմա գերմանացի չկայ նրանցում, միացուած են Ռուսաստանին, Լեհաստանին, Չեխիային: Գերմանիայից ուժով խլուեցին: Այսպիսի անհամար օրինակներ կան: Մեծ եւ Փոքր Հայքերն էլ հայերի երկրներն էին, հիմա հայերից խլուած են: Մեծ Հայքից այս մի կտորը հրաշքով պահպանուել է (զգոյշ լինենք, հայեր, հազար անգամ զգոյշ, այս է ասածս): 3. Արդարութիւնը բացարձակապէս որեւէ նշանակութիւն չունի քաղաքականութեան մէջ: Հազար անգամ արդար է Ղարաբաղը Հայաստանին վերամիաւորելը: Բայց աշխարհի հզօրները թքել են ամէն տեսակ արդարութեան վրայ, նրանք իրենց շահով են առաջնորդւում, իսկ այս դէպքում նրանց շահը բնաւ հայերի խնդիրը կատարելը չէ, այլ հայերին օգտագործելն է: 4. Պահանջելը (պահանջատիրութիւն) որեւէ առնչութիւն չունի այս կամ այն պետութիւնից հող ստանալու հետ: Որքան էլ մենք պահանջենք մեր պատմական օտարուած հողերը, մի թիզ էլ չենք ստանայ: 5. Տարածքային հարցերը վճռում են զինուժով: ԱՄՆ-ը ուժ ունէր՝ Մեքսիկայից խլեց մի մեծ կտոր հող, Ռուսաստանը ուժ ունէր՝ գրաւեց Ուրալը, Սիբիրը, Միջին Ասիան, Անդրկովկասը, Պրուսիան: Ֆրանսիան ուժ չունէր, հեռացաւ Ալժիրից: Եւ այսպէս շարունակ:

1920 թ. Հայոց պետութիւնը պատերազմում էր Թուրքիայի հետ: Մենք պարտուեցինք, թուրքերը յաղթեցին, Կարսի մարզը գրաւեցին: Պէտք էր 20 թուին պահել այդ հողը: Չկարողացանք: Հիմա բռունցք ենք թափահարում:

Ռազմաճակատներում մեր տղաները իրօք անօրինակ սխրանքներ են անում, անկարելին կարելի են դարձնում: Նրանք ոչ թէ լրագրային, այլ իսկական հերոսներ են: Բայց եւ շատ են սպանւում, շատ: Ամէն անգամ մեր հրաշալի տղաների դիակները տեսնելիս անպատմելի ողբերգութիւն եմ ապրում: Եւ ապշում եմ, երբ մահախօսականներում սպանուողի մասին գրում են՝ անմահացաւ: Ինչո՞ւ ենք ինքներս մեզ խաբում: Մի անգամ տրուած կեանքը երիտասարդ հասակում կորցնում է անվերադարձ, գրում ենք, թէ անմահացաւ: Այդ գրողը կգնա՞յ այդպէս անմահանալու:

Ասում են պատերազմ մինչեւ յաղթանակ: Բայց ո՞րն է այդ յաղթանակը: Արդեօք Բաքուն գրաւե՞լը: Ոմանք էլ ասում են «Անընդհատ պատերազմ»: Արդէն ասացի արեւմուտքի մեր հարեւանի միջամտութեան մասին: Իսկ այս աղքատացած, իր գիւղատնտեսութիւնն ու արդիւնաբերութիւնը քայքայած Հայաստանը կդիմանա՞յ անընդհատ պատերազմին (քանի տարի՝ հի՞նգ, տա՞սը, հարի՞ւր, քանի՞): Անհիմն է նաեւ պնդել, թէ «Պարտուածների հետ չեն բանակցում»: Տասնեակ օրինակներ կարելի է բերել պարտուածների հետ բանակցելու, երբ պարտուածները փրկւում են աւելի մեծ կորուստներից (յիշենք թէկուզ Ք. ա. 66 թ. պարտուած Հայաստանի բանակցութիւնները Հռոմի հետ եւ մեզ համար ձեռնտու պայմանագիրը): Բայց Ղարաբաղում հայերը բնաւ էլ պարտուած չեն: Մեզ ասում էին՝ «Մի քանի յաղթանակ տանենք, որ Ադրբեջանը բանակցութիւնների նստի»: Տարանք այդ յաղթանակները եւ շատ փայլուն: Ո՞ւր են բանակցութիւնները: Չկան ու չկան:

Հակառակորդի հետ հաշտուելու եւ խաղաղութիւն հաստատելու համար նախ խաղաղութեան կամք ու ձգտում է պէտք: Այդպիսիք չեմ տեսնում ոչ Հայաստանի, ոչ Ղարաբաղի, ոչ էլ Ադրբեջանի ղեկավարութեան գործերում: Խաղաղեցման ձգտումը չկայ նաեւ հիւսիսի նուազավարի մօտ: Նրան մենք դեռ պէտք ենք որպէս գործիք օգտագործուելու համար: Յիշեալ կողմերը միայն քարոզչական յայտարարութիւններ են անում զինադադարի մասին:

Ցաւօք, մեր լրագրային եւ հանրահաւաքային «հերոսները» չեն զգում, որ իրենք եւս գործիք են: Հայկական հակաթուրքառուսամոլութեան բարդոյթը (որ կոչւում է ռուսական կողմնորոշում) արգելում է ճշմարտութիւնը տեսնել:

Իսկ ո՞րը կլինի մեր ինքնուրոյն գործելակերպը, մեր ինքնութիւնը գործիք լինելուց ազատուելը: Հաշտութիւնն ու խաղաղութիւնը: Այսօր դրանք են մեր ազգային շահը: Մեր ամենամեծ հերոսութիւնը:

Ինչ պայմաններո՞վ: Կարծում եմ, հետեւեալ. հիմա Ղարաբաղում ուժերի մօտաւոր հաւասարակշռութիւն կայ (նոյնիսկ մեր առաւելութեամբ), դա էլ պէտք է դրուի հաշտութեան պայմանագրի հիմքում: Լրագրային «հերոսները» խօսում են հաշտութեան միայն երկու տարբերակի մասին՝ կա՛մ յաղթանակ (որ անորոշ է), կա՛մ, ինչպէս իրենք են ասում՝ «Ղարաբաղը տալ Ադրբեջանին, որ... հայաթափուի»: Սա, կարծում եմ, գռեհիկ մտածելակերպ է, քանի որ կան նաեւ ուրիշ տարբերակներ, այդ թւում Ղարաբաղի տեղական (հայոց) զինուժի պահպանումը: Կայ Անդորրայի տարբերակը, կայ Ղարաբաղը միջազգային ենթակայ ճանաչելու տարբերակը, եւ մի շարք այլ տարբերակներ: Կրկնեմ՝ կարեւորը խաղաղութեան կամք ու ձգտում ունենալն է, որպէսզի ազատենք գործիք լինելու ճակատագրից:

Գիտեմ՝ այս յօդուածի դէմ էլ են գրելու մեր պատերազմասէր լրագրային «հերոսները»: Նրանց պէտք է անմիջապէս ցոյց տալ ռազմաճակատի ճանապարհը: Եթէ ստախօս չեն, եթէ կեղծաւոր չեն, թող գնան առաջին կրակագիծ կամ իրենց զաւակներին ուղարկեն: Բաւական եղաւ հանրահաւաքներում ու լրագրերի էջերում «հերոսանալը»: Նոյնը եւ Բաքուի պատերազմասէրները փոխանակ 17-18 տարեկան իրենց պատանի հայրենակիցներին ուղարկելու պատերազմի մսաղաց, թող իրենք մտնեն դրա մէջ:

Թէ մեզ, թէ Ադրբեջանին օդի ու ջրի պէս անհրաժեշտ են հաշտութիւն, խաղաղութիւն, համագործակցութիւն:

Ռ. ԻՇԽԱՆԵԱՆ

Անդրադարձ

Պրոֆեսորները վիրավորվում են

Մարտի 2-ի թերթում մեր հեղինակներից Արման Վարդանյանը հանդես էր եկել մի հոդվածով՝ «Երբ Բ-ն կդառնա Բեն» վերնագրով, ուր մտահոգություն էր արտահայտում այսօրվա լեզվական քաղաքականության մի քանի հարցերի մասին: Նյութի մեջ ակնարկ կար նաեւ ՀՀ կառավարությանն առընթեր տերմինաբանական պետական հանձնաժողովի գործունեության, մասնավորապես վերջինիս անցյալ տարվա դեկտեմբերի 25-ի նիստի վերաբերյալ, որի մասին գրում էր այս տարվա փետրվարի 17-ի (իրականում պետք է լիներ 18-ի. թերթի ճակատին սխալ էր գրված) «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը: «Անկեղծ ասած, սպասումներս չարդարացան, գրում է Ա. Վարդանյանը: Փոխանակ մշակելու լեզվի պետականության ուղղված կոնկրետ քայլեր կամ գոնե մտահոգություն արտահայտելու հայերենի այսօրվա վիճակով, հանձնաժողովը, պնդելով, թե հայերենի վրա ռուսական «ազդեցությունը թուլացել է», ծանրացավ մաքրամոլության եւ կանոնակարգության շուրջ տեսական բանավեճերի վրա»:

Այսքանը: Սակայն սա, ինչպես երեւաց հետագայում, խիստ վիրավորել էր վերոհիշյալ հանձնաժողովի հարգարժան անդամներին, որոնք էլ նախանցյալ շաբաթվա իրենց նիստում հատուկ քննարկման առարկա դարձրին այն եւ ապրիլի 8-ի թվագրմամբ մի գրություն ուղարկեցին խմբագրություն՝ տպագրելու համար: «Ձեր թերթի ս.թ. մարտի 2-ի համարում ՀՀ կառավարությանն առընթեր տերմինաբանական պետական հանձնաժողովի հերթական նիստերից մեկի վերաբերյալ հաղորդագրության կապակցությամբ հանդես է եկել Արման Վարդանյանը, որը երեւի միայն «Հայաստանի Հանրապետություն» թերթն է կարդում եւ միամտորեն կարծում, թե տերմինաբանական պետական հանձնաժողովի գործունեությունն սպառվում է այդ նիստով», գրում են նրանք: Իրոք վիրավորված են, այնպես չէ՞: Տեղեկացնենք, որ Ա. Վարդանյանը, ըստ իր հավաստիացումների, ջերմեռանդորեն կարդում է նաեւ այլ թերթեր, այդ թվում նաեւ մերը:

«Իհարկե, տերմինաբանական պետական հանձնաժողովը (նախկին տերմինաբանական կոմիտեն) անթերի չէ, կարող էր ավելին անել, քան արել է, հետեւեր իր ընդունած որոշումների կատարմանը, խոստովանում են գիտնական այրերը: Սակայն թող հայտնի լինի հոդվածագրին եւ խմբագրությանը, որ հանձնաժողովն, իր կանոնադրությանը համապատասխան, սիստեմատիկաբար նիստեր է գումարում (դեկտեմբերի 25-ի նիստը նրա 87-րդ նիստն է), մշակում եւ սահմանում է ժամանակակից հայերենի տերմինաբանության եւ տերմինաշինության, տառադարձության, ուղղագրության, ուղղախոսության եւ կետադրության նորմերն ու սկզբունքները...» եւ այսպես մի քանի պարբերություն իր գործունեության ոլորտների մասին: Այնուհետեւ՝ «...Ինչպես երեւում է հոդվածից, հեղինակը ծանոթ չէ ոչ միայն տերմինաբանական հանձնաժողովի գործունեությանը, այլեւ այն նյութերին, որոնք կապված են խորհրդարանի կողմից հայոց լեզվի մասին օրենքի քննարկման, ինչպես նաեւ ուղղագրության շուրջ տարվող վեճերի հետ: Այլապես, նա, որպես նորություն, չէր հրամցնի այնպիսի առաջարկներ, որոնք կապված են հիշյալ օրենքի ընդունման հետ կամ չէր խոսի այն մասին, որ հարմար պահ է ուղղագրությունը փոխելու»: Եւ՝ «...Ի տարբերություն հոդվածագրի, սփյուռքի հայ գործիչները լավ ծանոթ են տերմինաբանական պետական հանձնաժողովի գործունեությանը եւ նրա օրինակով փորձել են արտասահմանում կազմել հինգ հոգուց բաղկացած համապատասխան հանձնաժողով: Սփյուռքի թերթերից մեկը «Կարեւոր որոշումներ՝ հայոց լեզվի մաքրության եւ հարստացման համար» խորագրով հոդվածում գրում է. «Հայոց լեզվի մաքրության ու նրա հարատեւ հարստացման գործին է նվիրված հայրենի կառավարությանն առընթեր տերմինաբանական հանձնաժողովը, որը վերջին տարիներում այդ առնչությամբ որդեգրած է կարեւոր որոշումներ»:

Զավեշտալի է հանձնաժողովի անդամների անբավականությունը.- Արման Վարդանյանը գուցե թե նրանց աշխատանքին ծանոթ չէ մոտիկից, սակայն չէ՞ որ վերջինիս հոդվածը դրան չէր նվիրված, այլ լեզվական հարցերով ընդհանուր մտահոգություններին: Արման Վարդանյանը լեզվաբան չէ, սակայն չէ՞ որ պարզ քաղաքացուն նույնպես հուզում են լեզվական եւ ուղղագրական խառնաշփոթությունները, որոնց նա առնչվում է ամեն օր՝ ձեռքը վերցնելով զանազան հրատարակություններ ու թերթեր: Ո՞վ եւ ի՞նչ հետեւողականությամբ պետք է զբաղվի դրանցով: Հարցեր են: Չենք ասում, թե սոսկ տերմինաբանական պետական հանձնաժողովը, ուր իրոք հավաքված են վաստակաշատ լեզվաբաններ, գիտության եւ մշակույթի տարբեր բնագավառի գործիչներ, որոնք սակայն աշխատում են... հասարակական կարգով: Սա նույնպես հարց է:

Հետեւաբար՝ ի՞նչ կարիք կա ավելորդ նեղացկոտության եւ վկայությունների, այն էլ հեռուներից: Դաշտը մոլախոտով է պատած, մաքրել է պետք:

«Ազգ»

Huston Chronicle

ՆԱՎԹԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՁԵՌՔ ՁԵՌՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐԻ ՀԵՏ

Կալիֆոռնիայի նավթարդյունաբերական շրջանակներում ազդեցիկ «Հյուստոն Քրոնիքլ» թերթի փետրվարի 16-ի համարում «Տեսակետ» ենթախորագրի տակ լույս տեսած այս հոդվածն անդրադառնում է ամերիկյան նավթարդյունաբերական շրջանակներում տիրող այն մտայնությանը, թե նկատի ունենալով Ադրբեջանի նավթային հարստությունների շահավետ հեռանկարներն իրենց համար, Վաշինգտոնը պետք է հակում ցույց տա դեպի Ադրբեջանի քաղաքական պահանջները, հօգուտ վերջիններիս լուծելով ղարաբաղյան հարցը: Հոդվածագիրը պատմության դասախոս է Գլենդեյլի բարձրագույն քոլեջում եւ առաջին անգամ է հյուրընկալվում մեր թերթի էջերում:

Նավթային ընկերությունների ու կառավարության պաշտոնյաները, ովքեր Լեռնային Ղարաբաղի հայերին պարտադրված պատերազմում հակված են պաշտպանել ադրբեջանական կողմին, նախ լավ կանեն որոշեն, թե իրենց քաղաքականությունը որքան վնասաբեր կարող է լինել Միացյալ Նահանգների հեռանկարային շահերի համար:

Կովկասյան հակամարտությունը վերջերս մի նոր հակասական հանգույց ստեղծեց Կոնգրեսում՝ ի դեմ 1992 թ. ընդունված ազատության օժանդակման օրինագծում փոփոխություն մտցնելու առաջարկի: Ըստ օրինագծի, Ադրբեջանը զրկվում է տնտեսական օգնությունից, քանի դեռ չի դադարեցրել «բոլոր շրջափակումները եւ մյուս թշնամական գործողությունները Ղարաբաղի եւ Հայաստանի դեմ»: Փորձելով վերացնել արգելքը, Ադրբեջանի բարեկամները ձգտում են ուռճացնել Բաքվի կարեւոր դերի նշանակությունը, վարկաբեկել եւ օրինազրկել հայկական տեսանկյունը: Սակայն կորպորատիվ շահերի համար Արեւմուտքի սկզբունքների անտեղի զոհաբերումը կեղտոտ բիծ է թողնում նրանց «անարատ» փաստարկների վրա: Այն փաստը, որ նրանց չի հաջողվում տեսնել, թե Վաշինգտոնն ինչպես կարող է Անդրկովկասում զուգահեռաբար պաշտպանել թե իր շահերը եւ թե սկզբունքները, հարցականի տակ է դնում նրանց քաղաքականության տրամաբանությունը:

Իրադրության հիմնական փաստերը պարզ են: Սկսելով 1988 թ. բողոքի փետրվարյան խաղաղ ցույցերից, լեռնային մարզի բնիկ հայ ազգաբնակչությունը, որը տարածքի բնակչության 82 տոկոսն է կազմում, ազատություն է պահանջում 1921 թ. Իոսիֆ Ստալինի բռնատիրությամբ իրենց պարտադրված իշխանությունից: Փորձելով ձերբազատվել կոմունիստական այդ որոշումից, հայերը հակամարտության մեջ մտան մի նոր ռեժիմի հետ, որը հետամուտ էր 70 տարվա մշակութային ասիմիլյացիայի, ֆիզիկական արտաքսման քաղաքականության:

Օգնության արգելումը Ադրբեջանին կշռադատված միջոց է 5-ամյա ռազմավեճը խաղաղ ճանապարհով լուծելու հարցում Բաքվին խրախուսելու համար: Բավական է մի հայացք գցել քարտեզին, եւ Հայաստանի ու Ադրբեջանի հզորության հաշվեկշիռը ցույց կտա, թե ինչու են Բաքվի ծայրահեղականներն այդքան հակված անհաշտ հակամարտության: Իր 7,5 միլիոն բնակչությամբ եւ առնվազն 10 մլրդ բարել նավթային պաշարներով Ադրբեջանն ակներեւաբար ֆիզիկապես ի զորու է վերջնականապես ոչնչացնել կամ արտաքսել Ղարաբաղի 130 000 անհնազանդ հայերին, որոնք սեղմված են իր արեւմտյան սահմանների եւ մեծ եղբայր Թուրքիայի միջեւ: Գրեթե ամբողջ երկրի տարածքով մեկ մնալով առանց գազի եւ էլեկտրականության, հայերը դեմ առ դեմ կանգնած են սառցահարվելու եւ սովամահ լինելու հեռանկարի առաջ, քանզի նրանց արեւելյան սահմանները անդադար ռմբակոծվում են օդանավերով ու հրթիռներով: Այս պատմության տակ ավելի շոշափելի հարցեր կան թաքնված, քան Ղարաբաղը: Ազերիները ու նրանց դաշնակիցները Թուրքիայում իրականացնում են Հայաստանը շարունակաբար ուժազրկելու մանրաքայլ քաղաքականությունը: Շրջափակված եւ ուժասպառ հայերի միակ հզորությունը, թվում է, նրանց պահանջի արդարացիության մեջ է միայն:

Չգիտակցելով Հայաստանի անգնահատելի արժեքը որպես շրջանում հավասարակշռություն հաստատող՝ առանցքային «սեղ», փորձառու քաղաքական գործիչները կարող են խաբվել գործարարների փաստարկներով, որոնք թյուրիմացաբար կարծում են, թե իրենց ընկերությունների ֆինանսական շահերը համահունչ են Ադրբեջանի քաղաքական շահերին: «Փլաթ'ս Օյլգրամ»ն անցած դեկտեմբերին տեղեկացրեց, որ Բաքուն «մի նոր օդային եւ ցամաքային հարձակում է նախաձեռնել հարավային Հայաստանի դեմ», հարձակումն «աներկբայորեն նպատակ ունի մաքրել թե Ղարաբաղը, թե Հայաստանի հարավային Զանգեզուր գավառը եւ անեքսիայի ենթարկել Ադրբեջանի կողմից»: Զանգեզուրը դիտվում է որպես՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ անցնող Թուրքմենստան-Եվրոպա գազամուղի եւ Կասպից ծով-Միջերկրական նավթամուղի ամենահավանական ճանապարհ»:

Ընկերությունների ավագ պաշտոնյաներն իմաստուն կգտնեն, եթե չմոռանան, որ վերոհիշյալ խողովակաշարերը միանգամայն հնարավոր է կառուցել այդ նույն ճանապարհով, առանց բռնության զոհասեղանին դնելու Զանգեզուրի աշխարհաքաղաքական նշանակությունը: Ինչո՞ւ չեն կարող նավթային շահերն ու Հայաստանը ձեռք-ձեռքի գնալ: Հայաստանն ավելի քան ուրախ կլինի թույլ տալ, որ խողովակաշարերն անցնեն իր տարածքով:

Նրանք, ովքեր կողմնապահություն են անում այս հարցում, նախ պետք է նկատի առնեն այն հանգամանքը, որ վտանգավոր կարճատեսություն է Ադրբեջանը դիտել որպես նախկին Խորհրդային Միության քայքայված ու աղքատացած մասերից մեկը: «Ուոլ Սթրիթ Ջոռնըլ»-ում տպագրված հոդվածում Ջեյմս Քողեյը զգուշացնում է, որ «երբ Ադրբեջանը հասկանա իր նշանակալից նավթային հարստությունը եւ օգտագործի այն իր քաղաքական եւ ազգային նպատակներն առաջ տանելու համար, դրա ապակայունացնող ազդեցությունը շրջանի վրա հսկայական կլինի»:

Քողեյն ուշադրություն էր հրավիրում այն հաղորդագրությունների վրա, որ Ադրբեջանի 1993 թ. պետական բյուջեի 70 տոկոսը նախատեսված է ռազմական ծախսերի համար, եւ որ նրա զինանոցում կան երեք «Սկադ» տիպի հրթիռներ: Հայտնի է, որ Թուրքիան զինավարժում է Ադրբեջանի աճող բանակը եւ «հնարավոր է, որ Իսրայելն արդեն փոխանցել է Ադրբեջանին ամերիկյան արտադրության զինամթերքներ»: Նամանավանդ Իսրայելի միջամտությունը, ըստ Քողեյի, «արտակարգ տարօրինակ է հնչում», մինչդեռ նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի «հակասեմական արտահայտությունների» այն մասին, թե «երկրի վերջնական նպատակների մեջ մտնում է Հյուսիսային Իրանում բնակվող ադրբեջանական ազգաբնակչության հետ վերամիավորվելը (փաստորեն մասնատելով երկիրը), որի բնակության տարածքն այնքան հաջող է սահմանակցում երկրին, որ ասես հատուկ ստեղծված է Ադրբեջանի մտադրությունների շուրջ անհանգստություն հարուցելու համար»:

[illegible] «Ռոսսիյսկայա Գազետա»-ի զեկուցումն էր այն մասին, թե Ադրբեջանի ներքին գործերի նախարար Իսքանդեր Համիդովն անցած նոյեմբերին Բաքվում Մուսավաթական կուսակցության համաժողովի ժամանակ «ցնցեց ունկնդիրներին», հայտարարելով, թե իր կառավարությունը մի քանի ատոմային զենք ունի, որոնք կարձակվեն Երեւանի վրա, «եթե հայերն ուշքի չգան»: Նրան չէր անհանգստացնում այն փաստը, որ զուգահեռաբար կկործանվի նաեւ Ադրբեջանի կեսը, հոգ չէ, քանզի «հայերը կբնաջնջվեն երկրագնդի երեսից»: Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտն այնուհետեւ հայտարարեց, որ այն փաստի օգտին վկայող որեւէ տվյալ չի հայտնաբերվել: Ամենայն հավանականությամբ դա այդպես է, սակայն սպառնալիքի բնույթը ցույց է տալիս Բաքվի բոսերից մի քանիսի մտավոր մակարդակը:

Երբ որոշում ընդունողներն արդեն այսօր ճիշտ չմտածեն ու չգործեն, ապա կգա մի պահ, երբ կզղջան, որ զիջել են Բաքվի բացահայտ ճնշմանը: Նավթային արդյունաբերության այնպիսի փորձագետ խորհրդատուներ, ինչպիսիք են Սոհրաբ Ռոբ Սոբհանին «Ապաչի Ինթերնեյշնըլ»-ից («Աուլյուք», 27 դեկտեմբերի 1992), պետք է վերագնահատեն ազերի բանակցողների պահանջների հետ լուռ համաձայնելու իրենց պատրաստակամությունը: «Ի դժբախտություն ամերիկյան ընկերությունների, գրում էր Սոբհանին «Աուլյուք»-ում, օգնության արգելումը նրանց խիստ անբարենպաստ պայմաններում է դնում: Հյուսիսում գտնվող «Ամոկո», «Փենզոյլ» եւ «Ապաչի» նավթային ընկերությունների ներկայացուցիչներին ադրբեջանական խորհրդարանի խոսնակն ասել էր, որ Կոնգրեսի սահմանափակումները «բացասաբար կազդեն Ադրբեջան-Միացյալ Նահանգներ առեւտրական եւ տնտեսական կապերի վրա»:

Սակայն խորաթափանց գործարարները գիտեն, որ Ադրբեջանի անկում ապրող նավթային արդյունաբերությունը վերակենդանացնելու համար արեւմտյան տեխնոլոգիայի էական նշանակությունը վերջին խոսքի առավելություն է տալիս ամերիկյան ընկերություններին եւ նրանց բրիտանացի մրցակիցներին ազերիների հետ բանակցությունների մեջ, առնվազն ներկա պայմաններում: Անիմաստ է հիմքեր տալ Բաքվի բլեֆին: Եւ «Ամոկո»-ի, եւ Ամերիկայի, եւ Հայաստանի շահերը կարող են բավարարվել, եթե ազերիներին պարզապես հասկացնեն, որ շատ նոր տեխնոլոգիա ներմուծելուց սպասվող հսկայական առավելությունն անհամեմատ գերակշռում է այն փոքր հողակտորի արժեքը, որից նա պետք է հրաժարվի անհապաղ խաղաղություն հաստատելու համար: Միացյալ Նահանգների կառավարության եւ նավթային ընկերությունների ներկայացուցիչները ի զորու են բանակցել ուժերի դիրքերից՝ պահպանելով ամերիկյան պատվախնդրության ոգին:

Իսկ ազերի առաջնորդներն էներգիայի կենսական աղբյուրները խելահեղ պատերազմից հեռացնելու եւ դեպի իրենց քաղաքացիների բարօրությունն ուղղորդելու համար պետք է ընդամենը մի փոքր զիջում ցուցաբերեն Ղարաբաղի բնիկ հայերի ինքնորոշման բնական ձգտումի նկատմամբ: Ադրբեջանի եւ Ղարաբաղի կառավարությունների միջեւ տարածքային փոխզիջումը հարցի ճիշտ լուծումը կլիներ: Առավել եւս, որ խաղաղություն հաստատելու գինը Ադրբեջանի համար ամենեւին մեծ չէ. ընդամենը 1700 քառակուսի մղոն նավթազուրկ լեռնային հողակտոր՝ Ադրբեջանի 33 000 քառակուսի մղոն ռեսուրսներով լեփլեցուն հարթավայրերի, դաշտավայրերի եւ ծովափերի դիմաց:

Ազերիներն անգամ ձկնկիթ ունեն: Հաշվի առնելով իրենց հսկայական հարստությունը եւ հայերի ծայրահեղ աղքատությունը, ազերի առաջնորդները միանգամայն կարող են իրենց թույլ տալ ազատության բնազդները զսպելու շքեղությունը եւ աշխարհին ցույց տալ, որ ազերի ժողովուրդը կարող է իմաստուն եւ արդարամիտ լինել:

Քանի դեռ ազերիներն ավելի շրջահայաց ուղի չեն բռնել, Թեխասի նավթային գործարարները եւ Վաշինգտոնի պետական գործիչները շատ մեծ շնորհ արած կլինեն խաղաղության գործին, եթե հրաժարվեն Բաքվի հոխորտանքի առաջ խոնարհվելուց:

Պահպանելով Ադրբեջանին օգնություն ցույց տալու Կոնգրեսի սահմանափակումը, նեցուկ լինելով Հայաստանին՝ որպես ապագա ապակայունացման դեմ ապահովագրության երաշխիքի եւ ամուր կանգնելով արժեքավոր իդեալների ու ազգային շահերի սկզբունքները պաշտպանելու դիրքում, ուժեղ ամերիկացի բանակցողները կարող են եւ իրենց եկամուտների շահերը պաշտպանել, եւ միեւնույն ժամանակ խրախուսել ազերիներին, որ նրանք ապացուցեն մարդու իրավունքների պաշտպանությանը եւ քաղաքական արդարության համամարդկային սկզբունքներին իրենց նվիրվածության անկեղծությունը:

ԼԵՎՈՆ ՄԱՐԱՇԼՅԱՆ



Կարծ

Մարսելի էկոնոմիկա

Իրավիճակի անսովորությունը, ուղղորդիչների եւ վերջնանպատակի անորոշությունը լավագույն ուղեկիցները չեն տնտեսական վերափոխումների ճանապարհին: Սրանք են հաճախ դառնում այն պայմանավորիչները, որոնք ստիպում են տնտեսական կայունացման խնդրին համակարգատարային մոտեցում ցույց տալ: Իսկ սա արդեն երկրորդ պլան մղելով տնտեսական խնդիրներն ու նպատակները, կարող է հանգեցնել երկրի դժվար վերականգնելի մտավոր եւ տեխնիկական պոտենցիալ կորստին: Արտադրության անկումը, ճգնաժամերը, որոնք հետեւանք են նաեւ համատարած [illegible], աղքատ ազգականի կարգավիճակի մեջ են դնում մշակույթը, հիմնարար եւ փորձարարական նախագծային մշակումները, պայմաններ են ստեղծում «ուղեղների» եւ դրանց հետ նաեւ այլ բնույթի ազգային կապիտալի արտահոսքի համար, մնացած մասնագետներին մեծ դժվարությունների առաջ կանգնեցնելով աշխատանքի տեղավորման հարցում: Այս խնդրի մեջ ցանկացած «քաղաքակիրթ» տարբերակի արհեստական ներարկում դատապարտված է անհաջողության եւ ավելի է խորացնելու վիճակի ծանրությունը, հասցնելով ընդհուպ մինչեւ սոցիալական պայթյունի:

Արեւմտյան էկոնոմիկայի շատ տարրերի նույնականությունն ինքնանպատակ չէ: Ստանդարտացումը հաջող է իրականացվում, քանզի կիրառվում է առանց շփոթմունքի, ներդրվում ուշիուշով ընտրված չափանշվածքով: Այն ծառայում է այն բանին, որ առավելագույն արդյունավետություն կորզի ոչ միայն միջազգային համագործակցությունից, այլեւ սեփական տնտեսական պայմանների յուրահատկությունից:

Խնդիրների հաղթահարման ուղիների հարմարեցումը պատրաստ պատասխանների կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, երբ համընկնում են իրենց խնդիրները: Եւ կասկածելի է ճշմարտացիությունն այն պնդումների, որոնք վերաբերվում են այս կամ այն տնտեսական ձեւերին, լինի դա հասարակական թե մասնավոր սեփականություն, շուկայական թե վարչական կարգավորիչներ: Արգասաբեր է այն նախադրյալների վերլուծությունը, որոնց դեպքում աշխատում են տարբեր տնտեսական կառուցվածքներ:

Տնտեսական լուծումների յուրօրինակությունը չի կարող ինքնանպատակ լինել: Եթե ժամանակ եւ միջոցներ վատնվի հեծանիվ հայտնագործելու վրա, անտեսելով այն, ինչը կարելի է ընդօրինակել, տնտեսական փլվածքից դուրս չենք գա: Միեւնույն ժամանակ որքան լուրջ է խնդիրը, այնքան էլ վտանգավոր է այլոց գաղափարների պատճենահանման վրա հույս դնելը:

Զարգացած երկրների տնտեսավարման մեջ ընդհանուրը, որն անկասկած արժանի է ուշադրության, թերեւս այն է, որ այնտեղ հրաժարվում են տնտեսական դոգմաներից, պատրաստ լինելով ինչ որ բան վերցնել, նմանակել նույնիսկ իրենց գաղափարական ընդդիմախոսներից: Հենց նորացումը չափանիշ դարձնելը, էկոնոմիկական քաղաքականությունը վրահաս տնտեսական խնդիրներին հարմարեցնելը, պետական միջամտության աստիճանը եւ ձեւերը փոփոխելն են դարձնում արեւմտյան արտադրությունը նախանձելի հարաճուն:

Ընդհանուրը՝ ընտրողական տնտեսական քաղաքականության, նրա նուրբ կարգավորմանը ձգտելն է: Այսպես օրինակ, հակամենաշնորհային օրենսդրության առջեւ խնդիր չի դրվում խոչընդոտել մրցակիցների ցանկացած համագործակցությանը, որոշակի պայմանների դեպքում նրանց միջեւ թույլ է տրվում կոոպերացիա հետազոտություններ եւ մշակումներ իրականացնելիս:

Վերափոխումների նպատակաուղղվածությունը միայն ողջունել կարելի է: Սակայն բարեփոխումների կողմնորոշիչ անորոշությունը ոչ անհիմն կերպով համարվում է դրանց իրականացման գլխավոր արգելակներից մեկը:

Բաժինը վարում է
ՄԱՐԳԱՐ ՄԵՆԵՋՅԱՆԸ

Արգենտինա

Մենեմի քաղաքականությունը

Չնայած իր երկիրն աշխարհագրականորեն գտնվում է քաղաքակրթության հարավային սահմանագծի վրա, նախագահ Կառլոս Մենեմը եռանդուն ջանքեր է գործադրում այն մերձեցնելու հյուսիսայինին, որպեսզի Արգենտինան եւս դասվի աշխարհի առաջավոր երկրների շարքը:

Այս նպատակով էլ նա վերանայում է երկրի ներքին, եւ արտաքին քաղաքականությունը: Իր իսկ կուսակցության հիմնադիր Խուան Դոմինգո Պերոնը երկարատեւ ճառերով արգենտինացիներին զգուշացնում էր ամերիկացիներից, մինչդեռ Մենեմը, ընդհակառակը, Ամերիկան անվանում է «աշխարհի ամենամեծ երկիրը» եւ իր թենիսի խաղընկերոջ՝ Բուշի պարտությունից հետո փորձում է նորընտիր նախագահ Քլինթոնին այցելող առաջին հարավամերիկյան ղեկավարը լինել:

Նա երբեք առիթը բաց չի թողնում մյուս մայրցամաքներում իր երկրի գոյությունը զգացնել տալու համար: Այսպես, Արգենտինան միակ հարավամերիկյան երկիրն էր, որ ռազմանավերով եւ զորքով մասնակցեց Պարսից ծոցի պատերազմին: Հետագայում նրա զինվորներն ընդգրկվեցին նաեւ Խորվաթիա ժամանած ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի շարքերում: Երբ 1991-ին Հայիթիի նախագահին տապալեցին, նա շտապեց այնտեղ ժողովրդավարությունը պաշտպանելու նպատակով:

Այս բոլորն անշուշտ խիստ տպավորիչ է: Սակայն այն հանգամանքը, որ երկար տարիներ ռազմական իշխանության հաստատումից հետո ժողովրդավարությունը դեռ նոր է ձեւավորվում նաեւ հենց իր երկրի ներսում, ստիպում է «առաջագա գործընկերներին» զգուշավորությամբ մոտենալ Մենեմի խիզախ նախաձեռնումներին: Վերջերս, օրինակ, լուր տարածվեց, թե Արգենտինան կարող է խախտել իր պարտավորությունները, կապված կոնդոր տիպի հրթիռների արտադրության հետ: Պրն. Մենեմը խոստացել էր, որ այդ ծրագիրը (ենթադրվում է, Իրաքի կողմից) վերջ կգտնի, եւ հրթիռների մասերը Իսպանիա կառաքվեն ապամոնտաժման նպատակով: Լուրը, սակայն, նշում է, թե արգենտինացիները երբեք էլ մտադիր չեն հրաժարվել հրթիռները ղեկավարող համակարգերից: Բուենոս Այրեսում ստեղծված շփոթության առաջն առնելու միտումով պաշտպանության նախարարը ելույթ ունեցավ եւ նշեց, որ այդպիսի համակարգ ընդհանրապես գոյություն չունի երկրում: Տպավորությունն այն է, որ կառավարությունը տեղյակ չէ, թե ինչի է ընդունակ բանակը:

Մյուս կողմից, կա նաեւ Ֆոլկլենդյան (կամ Մալվինյան, ինչպես իրենք են անվանում) կղզիների հարցը: Արգենտինացի ոչ մի նախագահ չի համարձակվի հրաժարվել այդ կղզիների հանդեպ պահանջատիրության իրավունքից: Ճիշտ է, 1982-ին նրանք պատերազմը տանուլ տվեցին, բայց տարածքը մնում է վիճարկելի: Առայժմ Մենեմը «գրպանում» է այդ շրջանի ձկնորսության եկամուտը, բայց զգույշ է ուժի գործադրման հարցում: Հունվարին Անգլիայի արտգործնախարարի այցը Արգենտինա բավական հարթ անցավ: Կհետեւի՞ դրան արդյոք այցելությունն՝ Անգլիա:

The Economist

Վերականգնվել է Իմիրի կամուրջը: Ինչպես հայտնի է, մոտ մեկ ամիս առաջ Վրաստանի Իմիրի կայարանի շրջանում պայթեցվեց Հայաստանը Վրաստանին կապող երկաթուղային կամուրջը: Երկաթուղայինները խոստացել էին մեկ ամսվա ընթացքում վերականգնել այն, եւ կատարեցին իրենց խոստումը: Թբիլիսի-Երեւան գծում գնացքների երթեւեկությունը վերսկսվել է: Միաժամանակ ապրիլի 12-ից սկսել են երթեւեկել Թբիլիսի-Մոսկվա գնացքները: Սնարկ

Փարիզ

ՖՐԱՆՍԻԱՑԻ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ՍԵՐԲԵՐԻՆ

Ֆրանսիացի դիվանագետ Քրիստիան Լամբերը, որը հայտնի է իր առաջադեմ հայացքներով եւ օրհասական իրավիճակներում չերկնչելու սովորությամբ, վերջերս վեց ամիս նախկին Հարավսլավիայում էր գտնվում հատուկ առաքելությամբ, Զագրեբում գլխավորելով Ֆրանսիայի պատվիրակությունը: Օրերս 65-ամյա դիվանագետին Ֆրանսիայի արտգործնախարարությունը շտապ կարգով ետ կանչեց: Պատճառն այն է, որ Աֆղանստանում եւ Շրի Լանկայում պաշտոնավարած Լամբերի գնահատականները չափից ավելի քննադատական էին դարձել Հարավսլավիայի հակամարտության մեջ Ֆրանսիայի դիրքորոշման նկատմամբ: Մասնավորապես փետրվարի 1-ին Զագրեբից նրա ուղարկած վերջին զեկուցագիրը վերնագրված էր «Անզորություն, շփոթություն, լիբանանացում»: Այնտեղ նա նշում էր ՄԱԿ-ի ձեռնարկման անարդյունավետությունը եւ արեւմտյան երկրների թույլ տված սխալները: Ֆրանսիա վերադառնալուց հետո դեսպանը հարցազրույց ունեցավ «Le Point» հանդեսի թղթակցի հետ:

– Հարավսլավիայում վեց ամիս գտնվելուց հետո ի՞նչ հետեւության եք հանգել:

– Կարելի է միայն արձանագրել, որ իրադրությունը բարդացել է: Դժբախտաբար, ռազմական ձեռնարկումն այլեւս բացառված է: ՄԱԿ-ի ներկայությունը սոսկ երաշխավորում է սերբերի գործողությունները, որոնց եվրոպացիները ներկա են գտնվում անզոր կերպով: Իրոք, քաղաքացիական բնակչության դեմ հանցանքներ են գործել բոլոր կողմերը, բայց անհամամասնությունը մեծ է: Արդ, Ֆրանսիան աչք է փակել այդ ակնհայտ պատասխանատվության եւ սերբերի գործադրած ցեղասպանության մեթոդների վրա: Նրան կարելի է մեղադրել նույնիսկ «սերբասիրության» մեջ:

– Ինչո՞վ է դա արտահայտվում:

– Անուղղակի աջակցությամբ: Փորձում են մեղմացնել սերբերի հանցագործությունները եւ նրանց ծավալապաշտական քաղաքականությունը, որը հենց իրենք անվանում են «էթնիկական զտում»: Սա վտանգավոր եւ հակասական ընկալում է: Ֆրանսիան կտրուկ դեմ է որեւէ ռազմական միջամտության: Ավելին, ոչինչ չի արվել տնտեսական արգելքը կիրառելու համար:

– Այդ միջամտությունը հնարավո՞ր էր արդյոք:

– Այն հնարավոր եւ նախատեսված էր դեռ մի քանի ամիս առաջ: Սահմանափակ, օդային եւ «վիրաբուժական» միջամտությունն, անշուշտ, կնպաստեր Բելգրադի վարչակարգի թուլացմանը եւ նույնիսկ տապալմանը: Մինչդեռ այսօր օդային որեւէ գործողություն կարող է ուժեղացնել ազգայնական այդ վարչակարգը:

– Ո՞րն է եվրոպացիների եւ ՄԱԿ-ի գործողության արդյունքը:

– Ցավոք, Ֆրանսիայի անճարակության, նրա վերլուծական սխալների եւ Եվրոպայի անզորության դրսեւորման պատճառով ռազմական որեւէ գործողություն այլեւս չի նախատեսվում: Այս քաղաքականության հեռանկարային արդյունքը ծայրահեղորեն բացասական է դիվանագիտական եւ քաղաքական առումներով: Էլ չենք խոսում մարդու իրավունքների մասին: Հարկավոր էր սերբերի արարքները հենց սկզբից դատապարտել ամենայն խստությամբ:

– Այժմ որո՞նք են արեւմտյան երկրների գործողության միջոցները:

– Հնարավոր է երկու ուղի. կամ տեղում թողնել ՄԱԿ-ի զորքերը եւ խրախուսել իրավիճակի բարդացումը (քանզի այդ զորքերը սոսկ վավերացնում են կատարված փաստերը), կամ էլ աստիճանաբար հետ քաշել մեր զորքերը:

– Առաքելության այդ ընդհատումը չի՞ նպաստի արդյոք այն բանին, որ հակամարտությունը տարածվի Մակեդոնիայում կամ Կոսովոյում:

– Այո, բայց դժբախտաբար մենք այլ ընտրություն չունենք: ՄԱԿ-ի զորքերը ոչ միայն անզոր են, այլեւ վտանգի ենթակա: Դրանց ներկայությունն արդեն իսկ խրախուսում է Սերբիայի ծավալապաշտական քաղաքականությունը: Մենք այսօր լիակատար փակուղու մեջ ենք, եւ առկա է խորացման վտանգ: Պետք է թույլ տանք կիսամիջոցները վերսկսելու սխալը: Բացի դրանից, Սերբիային Ռուսաստանի աջակցությունը վտանգավոր է եվրոպական երկրների համար. կարող է ծնունդ առնել սերբ-ուղղափառ առանցք:

– Ուրեմն Դուք արձանագրում եք լիակատար ձախողո՞ւմ:

– Այո, բայց հարկավոր է նաեւ պահպանել այն, ինչ հնարավոր է, այդ թվում Վենս-Օուենի ծրագիրը, որը պետք է գործադրվի ամեն գնով: Զինամատակարարման արգելքի վերացում կարելի է նախատեսել կողմերի հավասարակշռությունը վերականգնելու նպատակով: Հաշտության ծրագրի ընդունման դեպքում հարկավոր է ուղարկել ոչ թե դիտորդներ, այլ խաղաղապահ ուժեր ամերիկյան զորախմբով: Եվրոպայի մեծ դրաման այն է, որ ԱՄՆ-ը չկիրառեց վերջին ամիսներին իր հռչակած հաստատակամությունը:

Le Point, 9 ապրիլ, 1993

Բոսնիա

«Դանուբյան թռիչք» գործողությունն սկսվեց

Հաջողությամբ եւ առանց միջադեպի ավարտվեց «Դանուբյան թռիչք» գործողության առաջին օրը, հաղորդում է RFI կայանը. նրան մասնակցեցին իտալական ռազմակայաններում տեղակայված ֆրանսիական, ամերիկյան եւ հոլանդական ինքնաթիռները: Բոսնիայի սերբերի առաջնորդ Ռադովան Կարաջիչը հայտարարեց, թե այս գործողությունները խիստ վտանգավոր են եւ սերբերը կանեն հնարավոր ամեն ինչ, որպեսզի չընդհարվեն արեւմտյան օդուժի հետ: Հունաստանի վարչապետի դիպուկ գնահատմամբ, «այս գործողությունը մեկն է այն բազում անհեթեթությունների, որ այսպես առատորեն իրականացվում են վերջին ժամանակներս»: Միաժամանակ, BBC կայանը հաղորդում է, որ Դաշնակցային Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը դեմ է արտահայտվել Սերբիայի դեմ կիրառվող պատժամիջոցների խստացմանը: Նա գտնում է, որ հակամարտող կողմերին պետք է եւս մեկ հնարավորություն տալ համաձայնության գալու Վենս-Օուենի խաղաղ կարգավորման ծրագրի շուրջ, «բայց եթե այս հնարավորությունը եւս անտեսվի, ապա անհրաժեշտ է գործնական միջոցառումներ կիրառել»: «Գերմանական ալիք» կայանը հաղորդում է, թե Գերմանիայի մի շարք քաղաքներում տեղի են ունեցել բազմահազարանոց ցույցեր ընդդեմ գերմանական զինվորների մասնակցության «Դանուբյան թռիչք» գործողությանը: Ինչպես հայտնի է, Գերմանիայի սահմանադրական դատարանը օրինական է համարել բունդեստագի այն որոշումը, համաձայն որի գերմանական զինծառայողները կարող են մասնակցել ՆԱՏՕ-ի շրջանակներում իրականացվող ռազմական գործողություններին Գերմանիայի սահմաններից դուրս: Ցույցերին ընդհանուր առմամբ մասնակցել է շուրջ 50 հազար մարդ: ■

Պարետային ժամ Օչամչիրում: Վրաստանի պաշտպանության նախարար Թենգիզ Կիտովանիի հրամանով Օչամչիրի կայազորի զինվորական պարետ է նշանակվել փոխգնդապետ Մալխազ Կիպիանին: Մարտական գործողությունների թիկունքում կարգապահության եւ հասարակական կարգ ու կանոնի ամրապնդման նպատակով պարետային ժամ է մտցվել ժամը 22-ից մինչեւ առավոտյան ժամը 6-ը: Սնարկ

Ռուսաստան

Զինուժերը չեն ուղղվի այլոց դեմ

Ռուսաստանի զինված ուժերը երբեք չեն ուղղվի ուրիշ պետության դեմ: Մոտ ժամանակներս Ռուսաստանի Գերագույն խորհրդում կքննարկվի երկրի նոր ռազմական դոկտրինան, որով նախատեսվում է հրաժարվել ամեն տեսակ դաշինքային դիմակայությունից, ենթադրվում է գործակցություն ամեն մի պետության հետ, որը ձգտում է խաղաղություն եւ հրաժարվում ուժի գործադրումից: Այդ մասին երեքշաբթի օրը հայտարարեց Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը, ԳՖՀ պաշտպանության նախարար Ֆոլկեր Ռյուեի հետ հանդիպման ժամանակ, որը Մոսկվա է ժամանել պաշտոնական այցով:

Պ. Գրաչովը նշեց, որ դաշինքային դիմակայությունը Վարշավայի պայմանագրի եւ ՆԱՏՕ-ի անցյալում իր դերն է խաղացել զինվորական օկրուգների կազմավորման, դրանց սպառազինման մեջ եւ ԽՍՀՄ տրոհումից հետո խորհրդային բանակի լավագույն զորամասերը մնացել են «մերձավոր արտասահմանում»՝ Մերձբալթյան, Մերձկարպատյան եւ Կիեւի զինվորական օկրուգներում:

ՌՆ

Լուրերի Հոսք

Ռուսաստանի անդամակցությունը դյուրին չի լինի

«Ներկա պահին երեք երկիր բավարարում է Եվրոպայի խորհրդին անդամակցելու պայմանները: Դրանք են Հունգարիան, Լեհաստանը եւ Բուլղարիան: Կա եւս մեկ երկիր՝ Չեխո-Սլովակիան, բայց այժմ նա չի կարող դա անել միանգամայն ակնհայտ պատճառներով: Սակայն թե Չեխիայի Հանրապետությունը եւ թե Սլովակիան արդեն դիմել են անդամակցելու խնդրանքով», Լիսաբոնի «Դիարիու դե Նոտիսիաս» թերթին տված հարցազրույցում հայտարարեց Կատրին Լալյումիերը, որը 1989 թ. մայիսից զբաղեցնում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի պաշտոնը: Նա հայտնեց, որ «մայիսին անդամակցության խնդրանքներ կստացվեն Էստոնիայից, Լիտվայից եւ Սլովենիայից, քանի որ ընդունելության քննությունների արդյունքները դրական են»: Ինչ վերաբերում է մյուսներին, Լալյումիերը հույս ունի, որ «մինչեւ տարեվերջ Եվրոպայի խորհրդի անդամներ կդառնան Չեխիայի Հանրապետությունը, Սլովակիան, Լատվիան եւ Ռումինիան»: «Ալբանիան, Խորվաթիան, Բելառուսը եւ Ռուսաստանը նույնպես առաջադրել են իրենց թեկնածությունները, սակայն նրանք պետք է ավելի խիստ քննություն հանձնեն», գտնում է խորհրդի գլխավոր քարտուղարը: Սնարկ

Ձնահյուսերի անկումը շարունակվում է

Ապրիլի լույս 12-ի գիշերը Տրանսկովկասյան ճանապարհի վրա տեղի է ունեցել ձնահյուսի եւս մեկ անկում: Մասնավորապես Բուրոն ավանի շրջանում ճանապարհի փոքր հատվածում շրջափակման մեջ է հայտնվել 44 մեքենա, այդ թվում ուղեւորներով լի 4 ավտոբուս: Փրկարար ծառայությունները ձեռնամուխ են եղել մաքրման աշխատանքներին: Ինչպես ՌԻԱ-ի թղթակցին հայտնեց Հյուսիսային Օսիայի ՆԳ նախարար գեներալ-մայոր Գ. Կանտեմիրովը, ապրիլի 13-ին, առավոտյան ժամը 9-ի մոտերքը ձյան գերությունից ազատված են եղել բոլոր 44 մեքենաները եւ մոտ 400 վարորդներ եւ ուղեւորներ: Տրանսկովկասյան մայրուղով երթեւեկությունն ընդհատված է: Սնարկ

Պավել Գրաչովը կայցելի Թուրքիա

Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովն առաջիկայում կայցելի Թուրքիա, այդ երկրի պաշտպանության նախարարի հրավերով, երկուշաբթի հաղորդեց RFI կայանը: Կայանը հաղորդեց, որ նույն ժամանակ Թուրքիա կայցելի նաեւ Բուլղարիայի պաշտպանության նախարարը: Զուգադիպությո՞ւն է սա, արդյոք, թե կոնկրետ նպատակ է հետապնդում, առայժմ հայտնի չէ:

Գլուխկոտրուկ հարեւանների համար

Չինաստանի եւ Հարավ. Կորեայի արտգործնախարարները հանդիպում կունենան Թաիլանդի մայրաքաղաք Բանգկոկում, ուր կքննարկվի Հյուս. Կորեայի կողմից միջուկային օբյեկտների նկատմամբ միջազգային վերահսկողությունն արգելելու հարցը: Սեուլը հույս ունի, որ Չինաստանը կօգտագործի իր ազդեցությունը Փհենյանի վրա այս կնճիռը հանգուցալուծելու համար, հաղորդում է BBC կայանը:

Փոթիի նավահանգիստը արժույթի աղբյո՞ւր

Թբիլիսի, 13 ապրիլ, Սնարկ: Օրերս Թբիլիսիում այցելեց «Միասնական եվրոպա» կոոպերացիայի ղեկավարությունը, որին ընդունեց Վրաստանի փոխվարչապետ Ջուրաբ Քերեսելիձեն: [illegible] Փոթիի նավահանգստի [illegible] վերակառուցման [illegible] Վերակառուցումից հետո նավահանգիստը կարող է դառնալ արժույթի ստացման աղբյուր: ■

Լուրերի Հոսք

Խասբուլատովը ԱՊՀ պետությունների պայմանագրերի մասին

«Ըստ երեւույթին, ԱՊՀ երկրները կառավարական մակարդակով պայմանագրեր են կնքում դրանք չկատարելու համար», ապրիլի 12-ին հայտարարեց Ռուսաստանի ԳԽ նախագահ Ռ. Խասբուլատովը ԳԽ նախագահության նիստում, Բելառուս, Ուկրաինա, Հայաստան, Ադրբեջան եւ Ղազախստան կատարած իր աշխատանքային այցից հետո: Նրա կարծիքով, պայմանագրերի մի մասը միանգամայն «անբովանդակ է, վատ եւ հապճեպ նախապատրաստման պատճառով»: Մյուս մասը, որ «Գերագույն խորհուրդների վավերացմանը ենթակա լուրջ համաձայնագրերն են», չեն կատարվում: Այս շաբաթ Ռուսաստանի խորհրդարանը պետք է քննարկի ԱՊՀ կանոնադրության վավերացման հարցը: Սնարֆ

Եվրոպան եւ Ֆրանսիան պատրաստ բարձրության վրա չէին, իսկ Ռուսաստա՞նը

Ֆրանսիայի արտգործնախարար Ա. Ժյուպեն հայտարարել է, թե Ռուսաստանն սպառնալով օգտագործել վետոյի իրավունքը, խնդրել է երկու շաբաթով հետաձգել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում այն բանաձեւի նախագծի քննարկումը, որ խստացնում է Սերբիայի դեմ ուղղված պատժամիջոցները: Ռուսաստանը, ասել է նա, ելույթ ունենալով TF-1 հեռուստաընկերության լուրերի թողարկման ժամանակ, ծանր վիճակում է եւ պետք է հաշվի առնի իր հասարակայնության տրամադրությունները: ԱՄՆ հասկանում է դա, ձգտելով այդ երկրի կայունացմանը: Ռուսաստանի տեսակետից սերբական կողմին դեռ կարելի է համոզել համաձայնելու Բոսնիայի ու Հերցեգովինայի խնդրի խաղաղ կարգավորման Վենս-Օուենի ծրագրին: Նախկին Հարավսլավիայի իրադրությունը մեզ մտահոգում է բոլոր առումներով, ընդգծել է նախարարը, Եվրոպան եւ Ֆրանսիան պատրաստ բարձրության վրա չէին եւ չեն կարող ասել, թե չգիտեին այնտեղ կատարվող դեպքերի մասին: Այժմ իրադրությունը վատթարացել է: Սերբերն ամենքին կանգնեցրել են կատարված փաստի առջեւ, փոփոխություններ են կատարվել դիվանագիտական իրադրության մեջ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Օգնելը կօգնենք, բայց կղզիները վերադարձրեք

Ճապոնիայի արտգործնախարար Կաբու Մուտոն ապրիլի 13-ին Տոկիոյում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց, որ Ճապոնիայի կառավարությունն այլեւս մտադիր չէ Ռուսաստանին օգնելու հարցը շաղկապել տարածքային հարցի լուծման հետ: «Ռուսաստանը, ընդգծեց նա, ներկայումս ձգտում է մուտք գործել ազատ երկրների ճամբար, եւ նման ժամանակներում, բնականաբար, հարկավոր է նրան օգնել, անտեսելով մյուս բոլոր խնդիրները: Տոկիոն գտնում է, որ Ճապոնիայի համար առանձնահատուկ կարեւորություն ունի այն բարեփոխումների հաջողությունը, որոնք Ռուսաստանի ղեկավարությունն անցկացնում է հանուն ժողովրդավարացման եւ շուկայական տնտեսության կառուցման»: Մուտոն ընդգծեց, որ Ճապոնիան կշարունակի երկկողմ բանակցությունների ընթացքում պնդել, որ իրեն վերադարձվեն Կուրիլները: Նա մտադիր է տարածքային հարցի առթիվ Ճապոնիայի դիրքորոշումը կրկին շարադրել այս շաբաթ Կոզիրեւի հետ իր բանակցությունների ժամանակ: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Ինչպե՞ս ձեզ հասկանալ, պարոն Ատալի

Լոնդոնի «Ֆայնենշլ թայմզ»-ի տվյալներով, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկն իր գոյության երկու տարում ավելի քան 200 միլիոն ֆունտ ստեռլինգ է ծախսել իր լոնդոնյան կենտրոնակայանի բարեկարգման եւ ընթացիկ ծախսերի ծածկման համար, որը կրկնակի անգամ գերազանցում է Արեւելյան Եվրոպայի բոլոր երկրների եւ նախկին ԽՍՀՄ տնտեսության մեջ կատարված երկարատեւ ներդրումների եւ փոխառությունների ընդհանուր գումարը: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Մշակույթ

Միջազգային չափանիշների թանգարան

Մեր թերթը ժամանակին, դեկտեմբերյան իր մի քանի համարներում գրեց ԱՄՆ-ի Դետրոյթ քաղաքում (Միչիգանի նահանգ) բացված Ալեք եւ Մարի Մանուկյան թանգարանի, այդ կապակցությամբ հրավիրված «Հայ արվեստի եւ ձեռագրաց հավաքածուներ Աշխարհի մեջ» թեմայով միջազգային գիտաժողովի մասին: Առայժմ սփյուռքահայ եւ օտար թերթերը շարունակում են անդրադառնալ այդ թանգարանի հարուստ գանձերին, դրանց ցուցադրման տպավորիչ մակարդակին: Ամերիկյան այդ քաղաքի ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցական համալիրի հարավակողմում կառուցված այս թանգարանը հարակից շինությունների հետ՝ Մարտիկյան գրադարան, եկեղեցու մշակութային սրահ, մարզարան, Երիտասարդաց կենտրոն եւ Ալեք Մանուկյան վարժարան, ամբողջացրեց հայկական Մշակութային կենտրոնը:

Հիշենք, որ արդեն 10 տարի է անցել այն օրից, երբ ազգային բարերար Ալեք Մանուկյանի ծախսով Էջմիածնում կառուցվեց Ալեք եւ Մարի Մանուկյան Գանձատունը, որտեղ ամփոփվեցին կիրառական արվեստի բազմաթիվ արժեքներ: Դետրոյթն այն քաղաքն է, որտեղ անցել է այդ նշանավոր հայորդու կյանքն ու գործունեությունը: Ծերունազարդ ամուսինները այս անգամ արդեն Ամերիկայում որոշեցին կառուցել հայկական թանգարան, որը նաեւ օտար ափերում ցոլացներ հայ ժողովրդի անցյալի փառքն ու ներկա ստեղծագործական հանճարի դրսեւորումները:

Վերը նշված գիտաժողովին, դեռ նրանից ամիսներ առաջ Հայաստանից հրավիրվել էր Գիտությունների ազգային ակադեմիայի Արվեստի ինստիտուտի բաժնի վարիչ Մանյա Ղազարյանը՝ կազմելու այս թանգարանի կատալոգը: Վերջերս ավարտելով աշխատանքները, գիտնականը վերադարձավ Երեւան: Օգտվելով առիթից, որոշեցինք այցելել նրան եւ, ինչպես ասում են, առաջին ձեռքից եւ ի մոտո ծանոթանալ թանգարանի նմուշներին, ընդհանրապես հավաքածուին:

Ինչպես պարզ դարձավ, թանգարանը պատմական, ազգագրական եւ գեղարվեստական բնագավառների ընդգրկումով արվեստի օջախ է, որն այցելուներին հնարավորություն է տալիս ծանոթանալ հայ ժողովրդի պատմության շրջաններին, ազգագրական ըմբռնումներին եւ գեղարվեստական հայացքներին: Ցուցադրանքը ներառնում է հիմնականում կիրառական արվեստի իրեր ուրարտական, կիլիկյան եւ, բնականաբար, նոր շրջանից: Դրանցից Մանյա Ղազարյանը կարեւորեց հատկապես Տիգրան Բ-ի եւ Տիգրան Դ-ի ժամանակների դրամների հարուստ հավաքածուն, որը պատմական խոշոր արժեք ներկայացնելով հանդերձ լավագույնս երեւան է հանում տվյալ ժամանակահատվածի քանդակագործական եւ մետաղամշակման կուլտուրան, ապա Լեւոն Բ-ին պատկանող արծաթյա թասերը (1215 թ., Սկարում), նույն ժամանակի ապարանջաններն ու մատանիները, նաեւ նոր ժամանակներով թվագրվող ոսկերչության եւ ստեղծագործության ընտիր նմուշներ, զանազան գոտիներ ու տարազներ Մուշից եւ Վանից, Սեբաստիայից եւ Կեսարիայից:

Ցուցադրության առաջնակարգ նմուշներից են նաեւ 1558 թ. խաչքար եւ Քյոթահիայի հայկական խեցեգործության գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործությունները: Գորգերն ու կարպետները 18-20-րդ դարերի են եւ ներկայացնում են Ղարաբաղը, Գուգարքը, Ուտիքը:

Հարկ է առանձնացնել նաեւ թանգարանի ձեռագրային բաժինը: Այն ընդգրկում է պատառիկներ 11-րդ դարից եւ մինչեւ 18-րդ դարասկզբի բազմաթիվ ձեռագրեր: Ամենահիշարժաններից են 1206 թ. Խարբերդում գրված եւ նկարազարդված Ավետարանը (Հեղինակ՝ Կոզմա) եւ Դրազարկում (Կիլիկիա) Սարգիս Պիծակի ծաղկած Շարակնոցը:

Թանգարանի հատուկ սրահում ցուցադրված են առանձին ստեղծագործություններ նոր եւ նորագույն շրջանից՝ հայ նկարիչներ Հովհաննես Այվազովսկուց, Սարգիս Խաչատրյանից, Հովսեփ Փուշմանից, Մարտիրոս Սարյանից, Հակոբ Կոջոյանից, Գրիգոր Խանջյանից, Ռուդոլֆ Խաչատրյանից, Պոլ Կիրակոսյանից, Ասատուր Պզտիկյանից:

Թվարկված եւ չթվարկված դեռ շատուշատ արժեքներ են հանգրվանել այս թանգարանում: «Ինչպե՞ս են դրանք հայտնվել այստեղ, ո՞վ կամ ովքե՞ր են դրանք հայթայթել», հարցիս Մանյա Ղազարյանն այսպես պատասխանեց.

- Այս կապակցությամբ ուզում եմ շեշտել մի շատ կարեւոր հանգամանք. թանգարանի ստեղծագործությունների զգալի մասը գնել եւ նվիրաբերել է ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Փիռեն ծ. վարդապետ Ավետիքյանը: Նա էլ կազմել է բոլոր ստեղծագործությունների ցուցակները եւ ղեկավարել թանգարանն ստեղծելու աշխատանքները: Շատ արժեքներ են նվիրաբերել Ալեք եւ Մարի Մանուկյանները, նրանց անվան հիմնադրամը եւ, անշուշտ, բազմաթիվ անհատ մարդիկ, որոնց անունները հիշատակված են հրատարակվելիք կատալոգ-ալբոմի ամենասկզբում:

Ի դեպ, թանգարանի բացման ժամանակ Ալեք Մանուկյանը մի շատ հետաքրքիր միտք արտահայտեց՝ գնահատելով բոլորի վաստակն այս գործում. «Ես միայն դրամ եմ տրամադրել»: Չմոռանամ ասել նաեւ, որ թանգարանում կա առանձին հուշասենյակ՝ նվիրված ազգային այս նշանավոր գործչին:

Վերջում Մանյա Ղազարյանն ավելացրեց. «Չեմ կարող չհիշատակել անունը մի մարդու, որը ղեկավարեց թանգարանի բացման կապակցությամբ տեղի ունեցած բոլոր միջոցառումները՝ գիտաժողով, համերգներ, հանդիսություններ: Դա անվանի գրող եւ հասարակական գործիչ, «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամի ատենապետ Երվանդ Ազատյանն է»:

ԼԵՎՈՆ ԼԱՃԻԿՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

Վ. ԶԱՔԱՐՅԱՆԸ ՀՀ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Երեւանում հրավիրվեց Հայաստանի շախմատային ֆեդերացիայի հաշվետու-ընտրական կոնֆերանս, որը հաստատեց ֆեդերացիայի կանոնադրությունը եւ ընտրեց նախագահության նոր կազմ: Կոնֆերանսը ֆեդերացիայի նախագահ ընտրեց Հայաստանի Ազգային ակադեմիայի թղթակից-անդամ, Երեւանի ճարտարագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Վանիկ Զաքարյանին: Զաքարյանը շախմատի վարպետ է, կրել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Հիմնել եւ ղեկավարում է «Նավակ» համահայկական բարեգործական շախմատային հիմնադրամը: Վերջին շրջանում նա ֆեդերացիայի համանախագահներից էր: Հաշվի առնելով ֆեդերացիայի բազմամյա ղեկավար Լորիս Քալաշյանի ծառայությունները, կոնֆերանսը նրան ընտրեց պատվավոր նախագահ:

Փոխնախագահներ ընտրվեցին Ռուբեն Վարդանյանը, Արմեն Համբարձումյանը, Յուրի Սուլտանյանը, պատասխանատու քարտուղար՝ Գագիկ Հովհաննիսյանը: ■

Կարպովը միշտ խաղի մեջ

Շախմատի աշխարհի նախկին չեմպիոն Անատոլի Կարպովը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, գրեթե առանց ընդմիջումների մրցաշարից մրցաշար է տեղափոխվում: Ահա հիմա էլ Մոնակոյից նա տեղափոխվել է Գերմանիայի Դորտմունդ քաղաք, որտեղ սկսվել է 8 գրոսմայստերների մասնակցությամբ բարձրակարգ մրցաշարը:

Կարպովն առաջին 3 տուրերում միայն հաղթանակներ է տարել եւ վստահորեն գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Նրան մեկական միավորով զիջում են 2 երիտասարդ տաղանդավոր գրոսմայստերներ՝ Կամսկին (ԱՄՆ) ու Կրամնիկը (Ռուսաստան): ■

Առաջատարներն ընդգծվել են

Շախմատի Հայաստանի պատանիների առաջնությունների վերջնագծում շվեյցարական մրցակարգի շնորհիվ առաջատարները կրճատվում են:

14 տարեկանների մրցաշարում չեմպիոն դառնալու լավ հնարավորություններ ունի վարպետության թեկնածու Անդրանիկ Մաթիկոզյանը (Երեւան), որը 7 հնարավորից վաստակել է 6,5 միավոր եւ եզրափակիչ 2 տուրից առաջ մեկ միավորով առաջ անցել մոտակա մրցակցից՝ Լեւոն Արոնյանից:

18 տարեկանների մրցաշարում առաջատարն է վարպետության թեկնածու Կարեն Ասրյանը, որը 7 հնարավորից վաստակել է 6 միավոր: ■

Փիթ Սամփրասն ու Շտեֆի Գրաֆը

Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիան խոշոր մրցաշարերից հետո հրապարակեց թենիսիստների նոր գործակիցների ցուցակը: Թե տղամարդկանց եւ թե կանանց ցուցակներում առաջին ռակետները փոխվեցին:

Տղամարդկանց մեջ լավագույնն ամերիկացի Փիթ Սամփրասն է, որն օրերս հաղթող ճանաչվեց Ճապոնիայում տեղի ունեցած խոշոր մրցաշարում, իսկ նախկին առաջատար Ջիմ Կուրյեն (ԱՄՆ) նահանջել է 2-րդ դիրք: 3-րդ տեղում է Ստեֆան Էդբերգը (Շվեդիա):

Կանանց ցուցակը գլխավորում է գերմանուհի Շտեֆի Գրաֆը: 2-րդ տեղ դուրս եկավ իսպանուհի Արանտա Սանչեսը: Վերջին ամիսների ընդգծված առաջատարը՝ Մոնիկա Սելեշը (Հարավսլավիա) նահանջեց 3-րդ տեղ: Ճիշտ է, Մոնիկա Սելեշը վերջերս համեմատաբար քիչ է ելույթներ ունենում: ■

Սուրեն Բարսեղյանը Լիբանանի հավաքականի մարզիչ-խորհրդատու

Ինչպես մեր թղթակիցը հաղորդում է Բեյրութից, Լիբանանի գավաթի խաղարկության եզրափակիչ 3-րդ հանդիպումը տեղի է ունենալու ապրիլի 30-ին:

«Ազգ»-ը գրել է, որ գավաթը վիճարկում են ՀՄՄ-ն եւ «Բորժ»-ը: Հիշեցնենք, որ եզրափակիչ առաջին հանդիպումն ավարտվել է 1:1 հաշվով: Լրացուցիչ 2-րդ հանդիպումն էլ առավելություն չի բերել կողմերից որեւէ մեկին (0:0):

Մրցաշրջանն անչափ հաջող եղավ ՀՄՄ-ի համար, որն առաջնությունում գրավեց 5-րդ տեղը, իսկ գավաթի խաղարկությունում հասավ եզրափակիչ: Մենք նշել ենք, որ ՀՄՄ-ի հաջողությունը մեծապես պայմանավորված է թիմի նոր գլխավոր մարզիչ Սուրեն Բարսեղյանի արդյունավետ աշխատանքով եւ հրավիրված 4 ֆուտբոլիստների Բ. Մելիքյանի, Վ. Աղասյանի, Ս. Օսիպովի, Ս. Այվազյանի վարպետ խաղով: Շուտով Լիբանանի հավաքականը ներգրավվելու է աշխարհի 1994 թ. (ԱՄՆ) առաջնության ընտրական մրցաշարին:

Թիմն ընդգրկված է ասիական «Դ» խմբում, որտեղ մրցակիցներն են լինելու Բահրեյնի, Հարավ. Կորեայի, Հոնգ-Կոնգի եւ Հնդկաստանի հավաքականները: Ի գնահատումն արդյունավետ աշխատանքի եւ կարճ ժամանակում ձեռք բերած մեծ հեղինակության, Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիան Սուրեն Բարսեղյանին նշանակել է այդ երկրի հավաքականի մարզիչ-խորհրդատու, իսկ Լիբանանի ամենահեղինակավոր ակումբներից մեկը՝ «Նըժմե»-ն բանակցություններ է վարում հայ մարզչի հետ: ■

Նրանք դուրս կգան խաղադաշտ

«ՎԱՆ» (Երեւան)
34 խ +20 =3 -11 99-66

Դարպասապահներ	
1. Մանուկյան Ռոբերտ	1962
2. Շահնազարյան Վաղարշ	1971
Պաշտպաններ	
3. Մելքոնյան Սամվել	1962
4. Ավագյան Գագիկ	1968
5. Մոսոյան Արա	1965
6. Բալաբեկյան Կարեն	1964
7. Գասպարյան Միհր	1975
Կիսապաշտպաններ	
8. Կարապետյան Գեւորգ	1963
9. Եվդոկիմով Արա	1971
10. Ղալթաղչյան Սահակ	1972
11. Տեր-Պետրոսյան Հակոբ	1971
12. Բաբայան Սամվել	1968
Հարձակվողներ	
13. Խաչատրյան Նվեր	1972
14. Գեւորգյան Հովիկ	1971
15. Խանամիրյան Արսեն	1968
16. Ղազարյան Արա	1974
17. Քյուփելյան Գեւորգ	1973
18. Ղազարյան Ղեւոնդ	1973
19. Գալստյան Արմեն	1973
20. Կնյազյան Արթուր	1976

Գլ. մարզիչ՝ Զիլինգարյան Արսեն
Թիմի պետ՝ Հարությունյան Կարեն
Մարզիչ՝ Ասոյան Էդուարդ

Ա. Ս.

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Մեծամոր

ԱՏՈՄԱԿԱՅԱՆԸ ԿԲԱՑՎԻ 18 ԱՄՍՈՒՄ

Մեր թերթի նախորդ համարում տեղեկացրել էինք, թե Հայաստանի կառավարությունը որոշում է կայացրել 1993 թ. ապրիլի 12-ից սկսել հայկական ատոմակայանի վերագործարկման աշխատանքները։ Այդ առթիվ երեկ Հայաստանի պետնախարար Սեպուհ Թաշճյանը հայտարարեց, թե 4 տարի առաջ ատոմակայանը փակվել է առանց հաշվի առնելու հնարավոր հետեւանքները, եւ եթե չփակվեր, Հայաստանն այսօր ի վիճակի կլիներ մոտ 2.5 անգամ ավելի շատ էլեկտրաէներգիա արտադրել։

Պետնախարարը տեղեկացրեց, թե ներկայումս աշխատանքները նախապատրաստական փուլում են՝ նախ կկազմվի աշխատանքների ծրագիր, որը կտեւի մոտ 30 օր, որից հետո կսկսվեն ուսումնասիրությունները։ Ամբողջ աշխատանքն, ըստ պրն. Թաշճյանի, կտեւի մոտ 18 ամիս եւ կարժենա մոտ 20 միլիարդ ռուբլի եւ 20 միլիոն ամերիկյան դոլլար։ Ընդ որում, այդ գումարի մի մասը Հայաստանը կարող է հայթայթել սեփական բյուջեի հաշվին, մյուս մասը որպես աջակցություն ստանալ Ռուսաստանի կառավարությունից (վերջինս այս խնդրում շահագրգռված է այն պատճառով, որ վառելիք է վաճառելու Հայաստանին)։ Չի բացառվում նաեւ արտասահմանյան երկրներից վարկերի ձեւով օգնությունը։

Ինչ վերաբերում է ատոմակայանի վերագործարկման վտանգավորությանը, ապա պրն. Թաշճյանը տեղեկացրեց, որ հայկական ատոմակայանն աշխատել է 12 տարի եւ այդ ընթացքում արտադրել 44 միլիարդ կՎտ ժամ էլեկտրաէներգիա, եւ բացի այդ, նույն տիպի 18 ատոմակայաններից 10-ը ներկայումս շարունակում են բարեհաջող կերպով աշխատել ԱՊՀ երկրներում եւ Արեւելյան Եվրոպայում։ Բացի այդ, ըստ պետնախարարի, ատոմակայանը կվերաբացվի միայն այն ժամանակ, երբ ստուգվեն նրա նախագծային անվտանգությունը, սեյսմակայունությունը, ռադիոակտիվությունը եւ այլն։ Պրն. Թաշճյանն այն կարծիքը հայտնեց, թե ատոմակայանի գործարկման վտանգավորությունը հիմնավորված չէ։ Նա հայտարարեց նաեւ, թե վերաբացման աշխատանքներին անպայման կմասնակցեն ռուսաստանյան մասնագետները (հայկական ատոմակայանը խորհրդային համակարգի է), ինչպես նաեւ ամերիկյան, ֆրանսիական եւ հնարավոր է նաեւ գերմանական մասնագետներ։

Ինչ վերաբերում է թափոններին, ապա պետնախարարն այն կարծիքը հայտնեց, թե դրանք կվերցնի այն պետությունը, որը տալու է միջուկային վառելիքը։ Անշուշտ, վերաբացման աշխատանքները պետք է վերահսկվեն անվտանգության խորհրդի կողմից, որը պետնախարարի խոսքերով, պետք է լինի անկախ եւ աշխատանքները կազմակերպի միջազգային մակարդակով։

Ա. Ա.

Մոսկվա

Պայքար «ուղեղների արտահոսքի» դեմ

«Ուղեղների արտահոսքի» դեմ պայքարելու 4 տարիներն ինձ հանգեցրին Եվրոպայում մեր ինստիտուտի մասնաճյուղի ստեղծման գաղափարին, որպեսզի աշխատակիցները տարվա կեսն անցկացնեն այնտեղ, իսկ մյուս կեսը՝ Ռուսաստանում», ՌԻԱ-ի թղթակցին տված հարցազրույցում ասաց մերձմոսկովյան Չեռնոգոլովկա ավանում գտնվող Լանդաուի անվան տեսական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Իսահակ Խալատնիկովը։

Նրա խոսքերով, այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են հարաբերականության աստղաֆիզիկան, մասնիկների ֆիզիկան, դաշտի քվանտային տեսությունը, հետաքրքրում են եվրոպացի մասնագետներին, եւ հեշտ կլիներ երկու մասնաճյուղ կազմակերպել Փարիզի համալսարանին եւ Իսրայելի Վայցմանի ինստիտուտին առընթեր։

Սնարք

Լուրերի Հոսք

Վիետնամն օգնում է Կուբային

Վիետնամը, որը եվրահամայնքից մարդասիրական օգնության վարկեր է ստանում, վերջերս 10 հազար տոննա բրինձ է նվիրել Կուբային, հավաստելով իր համերաշխությունը Ֆիդել Կաստրոյի վարչակարգին։ Այդ քայլը դժգոհություն է հարուցել եվրահամայնքի երկրներում։

Էլբրուսի շրջանում անհետ կորել է 5 զբոսաշրջիկ

Էլբրուսի շրջանում անհետ կորել է 5 զբոսաշրջիկ։ Ինչպես ՌԻԱ-ին հայտնեցին Ռուսաստանի արտակարգ իրավիճակների պետական կոմիտեում, ապրիլի 11-ի առավոտյան նրանք լեռներ են գնացել հանգրվաններից մեկից, եւ դրանից հետո որեւէ լուր չի ստացվել։ Կորածներից մեկը Ռուսաստանի քաղաքացի է, իսկ չորսը՝ բրիտանացի քաղաքացիներ են։ Լեռնափրկարարները որոնումներ են կատարում։ Կոմիտեի տվյալների համաձայն, Էլբրուսի շրջանում շարունակվում են սաստիկ ձյունատեղումները։ Տերսկոլի շրջանում առկա է ձնահյուսերի անկման վտանգ։

Սնարք

Բելառուսի վաստակաշատ քաղաքացիները հայտնի են

Բելառուսում հրապարակվել է վաստակաշատ քաղաքացիների կենսաթոշակների մասին կանոնադրություն, որը հաստատել էր հանրապետության կառավարությունը 1993 թ. մարտի վերջերին։ Պատերազմի վետերաններից, Խորհրդային Միության, սոցաշխատանքի հերոսներից, ԽՍՀՄ մյուս պատվավոր կոչումներն ունեցողներից բացի, ցանկի մեջ առկա են նաեւ պետական մակարդակի ղեկավարներ, հանրապետական գերատեսչությունների առաջին դեմքեր եւ ճյուղերի ղեկավարներ, ժողպատգամավորներ, ստեղծագործական եւ մարզական ընտրանին։ Նրանք բոլորն իրավունք են ստանում նվազագույն կենսաթոշակի 100-350 տոկոս բարձրացման, եւ կիսով չափ պակաս կվճարեն կոմունալ ծառայությունների դիմաց։ Տարեկան մեկ անգամ նրանք կկարողանան հանրապետությունում անվճար երթեւեկել գնացքով, բուժվել առողջարանում։ Նրանք եւ իրենց ընտանիքների անդամները ստանում են բուժօգնության գերադաս իրավունք։ Այս արտոնությունների հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են պետբյուջեի հաշվին։

Սնարք

Ճառագայթային իրավիճակը Տոմսկ 7-ի շրջանում

Տոմսկ-7 քաղաքի շրջանում վթարից աղտոտված տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 120 քառ. կմ։ Ռուսաստանի ատոմային էներգիայի նախարարության մամուլի կենտրոնի տվյալների համաձայն, ռադիոակտիվ հետքի գոտում հայտնված Գեորգիեվկա գյուղում առավելագույն աղտոտվածությունը կազմում է ժամում 55 միկրոռենտգեն։ Տոմսկ-Սամուս ճանապարհի ապաակտիվացվող հատվածի շրջանում ճառագայթման մակարդակը չի անցնում ժամում 140 միկրոռենտգենից։

Սնարք

Տեխնիկա

IBM-ը փոխում է նախագահին

Էլեկտրոնային արդյունաբերության հսկա IBM հանրահայտ ընկերությունը, 1992 թ. 5 միլիարդ դոլլարի վնաս կրելուց հետո, օրերս առաջին անգամ ընտրեց այնպիսի նոր նախագահ, որը յուրայիններից չէ։ 51-ամյա Լուիս Գերստները, որին մտերմաբար անվանում են պարզապես Լու, իր կարիերան սկսել է Մըքինզիի ռազմավարական խորհրդում, ապա դարձել «American express» ընկերության, իսկ այնուհետեւ՝ սննդարդյունաբերության հսկա «Nabisco»-ի նախագահ։ Այժմ նա IMB-ի նախագահի պաշտոնում փոխարինելու է Ջոն Էյքըրզին։ Վերջինս ընկերության պատմության մեջ «աչքի ընկավ» նրանով, որ առաջին անգամ տարին փակեց վնասով։ «Էյքըրզն IBM-ի լավ զինվորն էր, բայց բնավ ոչ այն զորավարը, որը կարողանար ֆիրման դարձնել արագ գործողության ուժ», պարզաբանում է «Բիզնես ուիք» թերթը։

Մինչդեռ Լ. Գերստները կազմակերպչական ջիղ ունի։ Նա խոշոր հոլդինգների եւ դրանց մեծ ծախսերի մոլի հակառակորդն է։ Նա հաճույքով է վերհիշում, թե ինչպես իրեն «American express»-ում առաջ էր քաշել մի աշխատողի, որը գնել էր օգտագործված համակարգիչ։ ■

Թմրամոլությունը իսկական չարիք է դարձել Վրաստանում։ Օրերս 7 թմրամոլներ եկան Թբիլիսիում գտնվող հանրապետական հիվանդանոց։ Այդ հիվանդանոցի մեծ բաժինն ըստ էության դարձել է զինվորական հոսպիտալ. այնտեղ պառկած են վրացաբխազական ճակատում վիրավորված զինծառայողներ։ Թմրամոլները բուժ անձնակազմից պահանջեցին թմրանյութեր։ Մերժում ստանալով, նրանք մոտեցան վիրավորներից մեկին եւ սկսեցին պնդել, որպեսզի նա դեղորայք պահանջի իր համար։ Մերժումից հետո նրանցից մեկը հարվածեց հիվանդին, չնայած որ իր առջեւ գտնվում էր անօգնական, վիրավոր եւ կոնտուզիայի ենթարկված մարդ։ Սնարք

Պրիմորիե

Երկրամասային խորհուրդը դեմ կորեացիների զանգվածային վերադարձին

Ժողպատգամավորների Պրիմորիեի երկրամասային խորհուրդը երկրի խորհրդարանին դիմում է հղել, խնդրելով կասեցնել առաջին ընթերցմամբ ընդունված որոշումը «Ռուսաստանի կորեացիներին վերականգնելու մասին»։

«Խորհրդարանը լուրջ սխալ թույլ տվեց, առաջին ընթերցմամբ ընդունելով քաղաքական կարեւոր փաստաթուղթ, առանց խորհրդակցելու Պրիմորիեի երկրամասային խորհրդի հետ, հաշվի չառնելով Ռուսաստանի Հեռավոր Արեւելքի հարավի բնակիչների կարծիքը, ՌԻԱ-ի թղթակցին ասաց դիմումի հեղինակներից մեկը՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցության Պրիմորիեի երկրամասային կազմակերպության նախագահ Իլյա Գրինչենկոն, խորհրդարանային փաստաթուղթը կարող է դառնալ Միջին Ասիայի նախկին խորհրդային հանրապետություններից դեպի Պրիմորիե կորեացիների զանգվածային գաղթի հուժկու խթան»։ Գրինչենկոյի կարծիքով, դա կարող է թուլացնել Պրիմորիեի կայունությունը։ Բացառված չէ նաեւ ազգամիջյան հարաբերությունների սրումը։

Նախքան ժողովուրդների ստալինյան տեղահանությունները, Պրիմորիեի երկրամասում ապրում էին տասնյակ հազարավոր կորեացիներ։ Այսօր նրանցից շատերը Միջին Ասիայից վերադառնալով Խաղաղ օվկիանոսի ափեր, բախվում են տեղի գյուղացիների, առաջին հերթին ռուսական կազակների դժգոհությանը, որոնք արդեն հողեր են ստացել այն շրջաններում, որտեղ կես դար առաջ ապրում էին կորեացիները։

Սնարք

Չեչնիա

Աբդուռզակովը գյուտեր է անում

Չեչնիայի արտգործնախարարի տեղակալ Ռուսլան Աբդուռզակովը հայտարարել է, թե ինքը Բաքու կատարած այցելության ժամանակ համոզվել է, որ «Հայաստանի կողմից ռազմական գործողություններին մասնակցում են նաեւ ռուսաստանյան զինծառայողներ»։ Նա տեղեկացրել է նաեւ, թե Ադրբեջանում հանդիպել է բազմաթիվ գերի ռուս զինծառայողների, որոնց թիվն առնվազն հասնում է մի գումարտակի։ Արտգործնախարարի տեղակալը հայտարարել է, թե «չնայած Ռուսաստանը փորձում է ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնել՝ որպես կրոնական բախում, այնուամենայնիվ այն զուտ տարածքային վեճ է եւ ոչ մի կապ չունի կրոնի հետ»։

Վերջին հայտարարությունն առնվազն տարակուսանք է հարուցում, քանզի չեչեն պաշտոնյան կարող էր ղարաբաղյան հակամարտության բնույթի վերաբերյալ պատկերացում կազմել ոչ թե Ռուսաստանի, այլ անմիջապես Հայաստանի եւ Ադրբեջանի միջոցով, որոնք երկուսն էլ բազմիցս հաստատել են, որ հակամարտությունը կրոնական բնույթ չի կրում։ Ինչ վերաբերում է ռուսաստանյան զինծառայողների մասնակցությանը ղարաբաղյան պատերազմում Հայաստանի կողմից, ապա պրն. Աբդուռզակովը կարող էր այդ մասին առնվազն նույնքան հավաստի տեղեկություններ ստանալ ոչ միայն Ադրբեջանի կողմից կռվող եւ ներկայումս գերի ռուս զինծառայողներից, այլեւ ազգությամբ չեչեն այն զինյալներից, որոնք ժամանակին գերի են վերցվել եւ որպես բարի կամքի արտահայտություն ազատ արձակվել եւ ուղարկվել Գրոզնի։ «Ազգ»

Ցավակցություն

Ագրարային ժողովրդավարական կուսակցությունը եւ պատգամավորական խմբակցությունը ցավակցում են ՀՈԱԿ Հանրապետական վարչության անդամ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻՆ նրա սիրելի մոր՝ ԿԼԱՎԴԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ մահվան կապակցությամբ։

«ՄՍ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԸԼ»
գիտաուսումնական կենտրոնի
«ԼԻՆԳՎԱ-ՍԵՐՎԻՍ» դպրոցը
Երեւանի Վ. Յա. Բրյուսովի անվան
օտար լեզուների
պետական ինստիտուտում
(Երեւան, Հովսեփ Էմինի 123)
կատարում է ընդունելություն
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Տարբեր մասնագիտությունների անձանց, ուսանողներին, դպրոցականներին հրավիրում է սովորելու օտար լեզուների դասընթացներում։
Դիմողների համար գործում են օտար լեզուների, ռուսերենի եւ հայերենի, ինչպես նաեւ հայ ժողովրդի պատմության 60-ժամյա դասընթացներ։
Ուսումնագիտական կենտրոնը կազմակերպություններին եւ անհատ անձանց կարող է տրամադրել թարգմանիչներ եւ կատարել թարգմանություններ։

Կենտրոնը գործում է ամեն օր,
ժամը 10:00-16:00
Դիմել 404 սենյակ
Հեռ. 25-31-43

23 ապրիլի
ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ Սիմֆոնիա թիվ 1 «Ռեքվիեմ եղեռնի զոհերի հիշատակին» հարվածայինների համար
Ակապելլա օրատորիա «Քրիստոսի կյանքը
Մասնակցում են Երեւանի հարվածային նվագարանների համույթը
Ազգային օպերային արական երգչախումբը
Գեղարվեստական ղեկավար ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Մենակատարներ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՍՏԱՋՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ՀԱՄԲԱՐՅԱՆ, ՎԱԼԵՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՌՈԲԵՐՏ ԲԱՎԵՅԱՆ
Դիրիժոր ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

24 ապրիլի
ԵՐԵՎԱՆԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ
ՌԻԽԱՐԴ ՎԱԳՆԵՐ Նախերգանք «Լոհենգրին» օպերայից
ՅՈՀԱՆՆԵՍ ԲՐԱՄՍ Կոնցերտ դաշնամուրի եւ նվագախմբի համար թիվ 1
Մենակատար ԱՐԵԳ ՍԻՄՈՆՅԱՆ
ԳԱԲՐԻԵԼ ՖՈՐԵ Ռեքվիեմ
Մասնակցում են
Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը
Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր խմբավար
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ,
Մենակատարներ ՀԱՍՄԻԿ ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ, ՎԱՂԱՐՇԱԿ ՕՀԱՆՅԱՆ
Դիրիժոր ՋՈՐՋ ՓԵՀԼԻՎԱՆՅԱՆ

25 ապրիլի
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ
ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ Ռեքվիեմ ի հիշատակ
ՊՅՈՏՐ ՉԱՅԿՈՎՍԿԻ Սիմֆոնիա թիվ 6 «Պաթետիկական»
Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ
Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր խմբավար
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ,
Մենակատարներ ՌԱԶՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՀԱՅԱԳՈՐԾՅԱՆ
Դիրիժոր ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ
Սկիզբը ժամը 14.00

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում։

Հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՄԼԷՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորման եւ տառատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65 Պատվեր 59149 Տպաքանակ 35 000 Դասիչ 1489 Ստորագրված է տպագրության 13.4.1993